ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ

Բռնության ենթարկված կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում

Զեկույց

© «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպություն

Երևան
2022

Հեղինակներ՝ Արման Ղարիբյան,
Նարինե Ալեքսանյան

Սրբագրիչ՝ Ազնիվ Նասլյան
Գրքի ձևավորումը՝ Լուսինե Դավթյանի

Ձեկույցը պատրաստել է «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունը: Այն պատվիրակել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» (2020-2022 թթ.) ծրագրի շրջանակում: «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» (2020-2022 թթ.) ծրագիրն իրականացնում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Երախտիքի խոսք

Խորին շնորհակալություն ենք հայտնում «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության ղեկավարությանն ու աշխատակիցներին ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերի ընտրության, դատական նիստերի մշտադիտարկման, ինչպես նաև բռնության ենթարկված կանանց հետ խորքային հարցազրույցների անցկացման հարցում փորձագետներին մեծապես աջակցելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ԳԼՈՒԽ 1
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԻՆՉԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ 12

Քննիչները վիրավորում, կշտամբում ու ծաղրում են բռնության ենթարկված կանանց 12

Ոստիկաններն ու քննիչները կանանց ապախրախուսում են բողոքել 16

Իրավապահները փորձում են հաշտեցնել բռնարարին և վոհին 18

Ոստիկանական բաժիններում հանդիպող այլ խոչընդոտներ 19

ԳԼՈՒԽ 2
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 21

2.1. Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները 21

Դատաքննության երկար ընթացքի պատճառները 24

Դատարանների ծանրաբեռնվածությունը 25

Դատավարության մասնակիցների բացակայությունը և նիստի տևողությունը 27

Տուժողների անվտանգությունը դատարաններում 30

Դատարանի և դատավարության մասնակիցների վերաբերմունքը տուժող կնոջ նկատմամբ 34

2.2. Ընտանեկան բռնության վերաբերյալ դատական ակտերի ուսումնասիրություն 37

2.2.1. Ընտանեկան բռնության վերաբերյալ
ըստ էության դատական ակտերի ուսումնասիրություն 37

2.2.2. Դատաքննության փուլում ընտանեկան բռնության գործերի
կարճման վերաբերյալ դատական ակտերի ուսումնասիրություն 59

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 68

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 72

Հավելված 1
Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով
դատական նիստերի մշտադիտարկման
մեթոդաբանական հարցաշար 78

Հավելված 2
Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով
դատական ակտերի ուսումնասիրության
մեթոդաբանական հարցաշար 80

Հավելված 3
2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած
քրեական օրենսգրքում ընտանեկան
բռնության վերաբերյալ գործերին առնչվող
հոդվածների փոփոխությունները 82

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բռնության ենթարկված կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքը կարևոր նախապայման է կանանց մյուս իրավունքների պաշտպանության և հատկապես խտրականության ու բռնության վերացման համար: Արդարադատության մատչելիությունը ներառում է ինչպես համապատասխան օրենսդրական կարգավորումների առկայությունը, այնպես էլ գործող մեխանիզմներն ու ընթացակարգերը, որոնք կերաշխավորեն արդարության վերականգնումը, կանանց պաշտպանությունը, բռնության կանխարգելումը, բռնարարների հետապնդումն ու նրանց արդարացի պատիժը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, որն ուղենիշային է ընտանեկան բռնության դեմ պայքարում, սահմանում է, որ մասնակից պետությունները[1] պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն կանանց նկատմամբ բռնությունները կանխելու, քննելու, պատժելու և հատուցելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս ընտանեկան բռնությանը վերաբերող մի շարք առանցքային գործերով անդամ պետությունների[2] համար գործերի քննության չափանիշներ է սահմանել: Դրանցից ամենակարևորն այն է, որ իշխանությունները, տեղյակ լինելով բռնության փաստին, պարտավոր են պատշաճ ջանասիրությամբ քննել գործը, պատասխանատվության ենթարկել բռնարարին և պաշտպանել բռնության զոհին ու նրա երեխաներին

1 Հայաստանի Հանրապետությունը ստորագրել, սակայն չի վավերացրել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

2 Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի անդամ է 2001 թվականից:

(եթե կան ընտանիքում երեխաներ)[3]:

Նույնպիսի դիրքորոշում ունի նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն: Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 ընդհանուր հանձնարարականում[4] Կոմիտեն սահմանել է, որ արդարադատության մատչելիությունն ընդգրկում է արդարադատությունից օգտվելու հնարավորությունը, հասանելիությունը, մատչելիությունը, լավ որակը, զոհերի համար պաշտպանության միջոցների ապահովումը և արդարադատության համակարգի հաշվետվողականությունը:

Սույն զեկույցի նպատակն է գնահատել, թե Հայաստանի Հանրապետությունում որքանով է պաշտպանված բռնության ենթարկված կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքը: Զեկույցում անդրադարձ է արվում մինչդատավարական և դատավարական փուլերում բռնության ենթարկված կնոջ նկատմամբ պետական մարմինների վերաբերմունքին՝ ոստիկանից մինչև դատական վճիռ կայացնող, ինչպես նաև արդարադատություն հաստատելու ճանապարհին առկա մարտահրավերներին: Այն չի ներառում 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքում առկա փոփոխությունների վերլուծությունը:

Այդ նպատակին հասնելու համար 2021-2022 թվականներին մշտադիտարկվել են ընտանեկան բռնության դատական գործերի նիստերը, և ուսումնասիրվել են ընտանեկան բռնության գործերով 2018-2022 թվականներին կայացված դատական ակտերը: Իսկ մինչդատավարական փուլում առկա խնդիրները բացահայտելու նպատակով խորքային հարցազրույցներ են անցկացվել ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ: Այսպիսով՝

3 Արման Ղարիբյան, Ընտանեկան բռնության իրավական հասկացության ծագումն ու զարգացումը, «Անալիտիկոն», փետրվար, 2017, https://theanalyticon.com/%d0%bd%d0%be%d0%b2%d0%be%d1%81%d1%82%d0%b8-hy/%d5%a8%d5%b6%d5%bf%d5%a1%d5%b6%d5%a5%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a2%d5%bc%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%ab%d6%80%d5%a1%d5%be%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%a1%d5%bd%d5%af%d5%a1%d6%81/

4 Committee on the Elimination of Discrimination against Women, General recommendation No. 33 on women's access to justice, 3 օգոստոսի 2015, https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1_Global/CEDAW_C_GC_33_7767_E.pdf

հնարավորություն է ստեղծվել բացահայտելու իրավակիրառ պրակտիկայում ընտանեկան բռնության գործերով քրեական պատասխանատվության կիրառման առանձնահատկությունները, քրեական հետապնդման միտումներն ու ձևավորված դատական պրակտիկան:

Զեկույցը պատրաստվել է նախքան ՀՀ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելը, ուստի վերլուծությունները հիմնված են դրան նախորդած օրենսգրքի դրույթների վրա, հոդվածների հղումները ևս այդ փաստաթղթից են: Նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ընտանեկան բռնության գործերին առնչվող հոդվածներում արված փոփոխությունները ներկայացված են Հավելված 3-ում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերով դատական նիստերի մշտադիտարկումը և դատական ակտերի ուսումնասիրությունն իրականացվել են սույն զեկույցի պատրաստման նպատակով մշակված մեթոդաբանությամբ, կազմվել են մեթոդաբանական հարցաշարեր: Իսկ բռնության ենթարկված կանանց հետ հարցազրույցներն անցկացվել են նախապես մշակված միասնական հարցաթերթիկով՝ հիմնվելով Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի պատրաստած «Խնդիրներ և խորհուրդներ կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության լուսաբանման վերաբերյալ» ձեռնարկի վրա:

Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատական նիստերի մշտադիտարկման նպատակով ընտրվել են հավասար թվով դատական նիստեր մայրաքաղաքում և մարզերում: Մշտադիտարկվել են ինչպես նախկինում սկսված և ընթացքի մեջ գտնվող, այդպես էլ նոր մեկնարկող գործեր, որպեսզի հնարավորություն լինի դիտարկելու տարբեր փուլերում գտնվող դատաքննությունների ընթացքը:

Դատական նիստերի մշտադիտարկումը ներառել է ոչ միայն նիստի ընթացքի, այլև նիստից առաջ և նիստից հետո դատարանի շենքի միջանցքում, շենքից դուրս և դրա մոտակայքում առկա իրավիճակի դիտարկումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բռնության ենթարկված կնոջ անվտանգային հարցերին, մեղադրյալ-տուժող կամ մեղադրյալի մտերիմ անձ-տուժող հնարավոր շփումներին: Իրավիճակը գնահատելու նպատակով դիտորդը դատարան է ժամանել դատական նիստի մեկնարկից 15 րոպե շուտ և հեռացել է դատարանից միայն այն ժամանակ, երբ տարածքից հեռացել են տուժողը, նրա ներկայացուցիչը, ինչպես նաև մեղադրյալը և նրա պաշտպանը: Դիտորդն իր դիտակետում

է պահել դատավարության մասնակիցներին նաև դատական նիստերի ընդմիջումների ժամանակ: Այս ամենը հնարավորություն է տվել նաև վերհանելու խնդիրներ, որոնք տեղի են ունենում ձայնագրման պայմաններում ընթացող դատական նիստից դուրս:

Նիստի ընթացքը մշտադիտարկելիս ուշադրություն է դարձվել դատարանի և դատավարության մյուս մասնակիցների վերաբերմունքին բռնության ենթարկված կնոջ և նրա ներկայացուցչի նկատմամբ: Նիստի ընթացքում հնչող հարցերը, հայտարարությունները, բացականչությունները վերլուծվել են գենդերային խտրականության, կարծրատիպերի և բռնության տարբեր ձևերի դրսևորման դիտակետից: Գնահատվել է նաև դատաքննության արդյունավետությունը կնոջը բռնությունից պաշտպանելու, բռնարարին պատժելու և հետագա բռնությունները կանխելու առումով:

Ընտանեկան բռնության վերաբերյալ կայացված դատական ակտերն ուսումնասիրվել են երկու ուղղությամբ. քրեական գործերի քննությամբ դատարանների կողմից ըստ էության կայացված դատական ակտերի ուսումնասիրություն և դատաքննության փուլում քրեական գործը կարճելու վերաբերյալ կայացված դատական ակտերի ուսումնասիրություն:

Դատական ակտերի ուսումնասիրությունն ընդգրկում է 2018-2022 թվականներին կայացված դատական ակտերի շրջանակը: 2018-2022 թվականներին դատարանների կողմից ընտանեկան բռնության գործերով կայացված դատական ակտերի հայտնաբերումն իրականացվել է www.datalex.am դատական ակտերի որոնման համակարգի միջոցով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտնաբերված դատական ակտերը բազմաթիվ էին, և բոլոր ակտերը հնարավոր չէ վերլուծել սույն ուսումնասիրության շրջանակում, որոշում է կայացվել կատարել ըստ էության կայացված դատական ակտերի ընտրանք՝ հիմք ընդունելով դատական ակտերի համամասնական բաշխվածությունն ըստ դատական ակտերի ընդունման տարիների, աշխարհագրական տեղանքի (մարզեր և Երևան) և հանցագործության ծանրության աստիճանի: Ուսումնասիրության

ընթացքում օգտագործվել է համեմատական վերլուծության և համադրման մեթոդաբանությունը:

Ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման և դատական ակտերի ուսումնասիրության համար մշակված մեթոդաբանական հարցաշարերը ներկայացված են Հավելված 1-ում և Հավելված 2-ում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԻՆՉԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Բռնության ենթարկված կանանց համար մինչդատավարական փուլում արդարադատության մատչելիության իրավունքի իրացման խնդիրները վերհանելու նպատակով 2022 թվականի առաջին քառամսյակում խորքային հարցազրույցներ են անցկացվել բռնության ենթարկված 14 կանանց հետ: Խորքային հարցազրույց է անցկացվել նաև ընտանեկան բռնության գործերով տուժողների շահերը ներկայացնող փաստաբան, «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Զարուհի Մեջլումյանի հետ:

Հարցազրույցի մասնակից բոլոր կանայք բռնության են ենթարկվել նախկին ամուսնու կամ զուգընկերոջ կողմից: Բոլորի դեպքում բռնությունը եղել է շարունակական (նվազագույնը՝ 2, առավելագույնը՝ 13 տարի շարունակ), գերակշռող է եղել ֆիզիկական բռնությունը, որն ուղեկցվել է հոգեբանական և տնտեսական բռնությամբ: Հարցազրույցի մասնակից բոլոր կանայք չեն դիմել իրավապահներին բռնության առաջին դրսևորումներից անմիջապես հետո: Բոլոր դեպքերում կանայք ոստիկանություն են գնացել շարունակվող բռնության ինչ-որ փուլում, երբ, օրինակ, ֆիզիկական բռնությունն ավելի ծանր հետևանքներ է թողել, կամ երբ այն կիրառվել է նաև երեխաների նկատմամբ:

Հարցազրույցի մասնակից բռնության ենթարկված բոլոր կանայք նշել են, որ ոստիկանությունում իրենց չեն պարզաբանել իրենց իրավունքները, չեն բացատրել ընտանեկան բռնության տեսակները

և պատրաստակամ չեն եղել լսելու իրենց հարաբերությունների ընթացքում շարունակական բռնությունների մասին: Քննիչները[5] սովորաբար արձանագրում են բռնության միայն մեկ դրվագը՝ ամենաթարմը, որում իրենք հանցակազմ են տեսնում: Կանայք նաև հայտնել են, որ ոչ բարյացակամ վերաբերմունքի են արժանացել ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողների հետ առնչվելիս, իսկ նրանց մի մասն էլ իրավապահ համակարգում հանդիպել է քամահրանքի, հեգնանքի, թերահավատության, անգամ անձնական վիրավորանքի:

Քննիչները վիրավորում, կշտամբում ու ծաղրում են բռնության ենթարկված կանանց

Հարցազրույցին մասնակցած կանանց գերակշիռ մեծամասնությունը պատմել է, որ քննիչներն ուղղակի վիրավորանքներ են հնչեցրել իրենց հասցեին կամ կշտամբել ու ծաղրել են: 17-ամյա Ա.Ի.-ն Վանաձորի ոստիկանությունում ոչ բարյացակամ վերաբերմունքի է արժանացել հատկապես, երբ հետ է վերցրել ամուսնու դեմ բողոքը: «Մատնաչափի՛կ, անչափահա՛ս, մեզ մատներիդ վրա ֆռռացնում ես...»,- աղջկան ասել է ոստիկանության ներկայացուցիչը: Նույնպիսի կշտամբանքի է արժանացել նաև 37-ամյա Ք.Վ.-ն, որին ոստիկանության Մաշտոցի բաժնում ասել են. «Դուք անինքնասեր եք, Դո՛ւք եք թույլ տալիս, որ նման դեպքեր են լինում, որովհետև բողոքը հետ եք վերցնում»:

Ընտանեկան բռնության գործերով բողոք կամ հաղորդում ներկայացրած կնոջ կողմից այն հետ վերցնելը բավականին տարածված պրակտիկա է. թեև օրենսդրությունը թույլ տալիս է գործի քննությունը շարունակել բողոքի բացակայության դեպքում և.ս, մեծ մասամբ իրավապահ մարմինները դադարեցնում են նյութերի նախապատրաստումը կամ նախաքննությունը կնոջ բողոքի բացակայության պայմաններում: Այնինչ ՀՀ քննչական

5 Բռնության ենթարկված կանայք դժվարանում էին հիշել կամ տարբերակել, թե իրենց հետ զրուցած ոստիկանության ներկայացուցիչը կամ իրենց գործը (հետա)քննող անձը ինչ պաշտոն է զբաղեցրել, ուստի այս գլխում «քննիչ» եզրույթը կարող է վերաբերել ոստիկանին, հետաքննիչին և քննիչին:

կոմիտեի նախագահի՝ 17 դեկտեմբերի 2014 թվականի հրամանով[6] հստակ ցուցում է տրված ընտանեկան բռնության գործերով կնոջ դիմումը (բողոքը) հետ վերցնելու պարագայում հանրային կարգով քրեական գործի հարուցումը կամ քրեական վարույթը շարունակելու վերաբերյալ: Հղում անելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Օփուզն ընդդեմ Թուրքիայի» նախադեպային գործով որոշման 168-րդ կետին՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահը հրամայել է, որ «մասնավոր կարգով հետապնդվող ընտանեկան բռնության գործերով, դիմողի (տուժողի) կողմից իր դիմումը (բողոքը) հետ վերցնելու դեպքում քրեական գործը հարուցվում է կամ քրեական վարույթը շարունակվում է հանրային կարգով, եթե մեծ է դիմողի նկատմամբ կրկին հանցագործություն կատարելու վտանգը: Ընտանեկան բռնության գործերով, դիմողի բողոքի բացակայության պայմաններում, հարուցված քրեական գործով պատշաճ քննության շրջանակում քննիչը պարզում է հանցանքի ծանրությունը, տուժողին պատճառված վնասի բնույթը (ֆիզիկական թե հոգեբանական), անձի կողմից զենք գործադրելը, հարձակումից հետո սպառնալիքների առկայությունը, տանը բնակվող երեխաների վրա ունեցած ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), անձի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը, տուժողի կամ մեկ այլ անձի առողջության կամ անվտանգության համար շարունակական վտանգի հավանականությունը, մեղադրյալի հետ տուժողի փոխհարաբերությունների ներկայիս վիճակը, տուժողի կամքին հակառակ քրեական հետապնդումը շարունակվելու ներգործությունն այդ փոխհարաբերությունների վրա և այլն»[7]: Նույնպիսի պահանջ է սահմանում նաև «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[8]: Հարցազրույցին մասնակցած կանանցից 6-ը երբևէ բողոք ներկայացրել, ապա այն հետ են վերցրել, սակայն տվյալ գործերով քննիչները չեն կատարել

6 Հրաման մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին, https://investigative.am/news/view/hraman2.html:

7 Նույն տեղում, 10-րդ կետ:

8 «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 55.1, https://rm.coe.int/168046246d:

վերոնշյալ հրամանը, իսկ երբ կանայք բողոքը հետ վերցնելուց որոշ ժամանակ անց վերադարձել են, հաճախ իրավապահներից լսել են կշտամբանքի խոսքեր իրենց հասցեին:

Ոստիկանության Մաշտոցի բաժնում սպառնացել են բռնության ենթարկված կնոջը. 27-ամյա Ա.Կ.-ին և նրա նախկին ամուսնուն առերես հարցաքննության ժամանակ քննիչն ասել է. «Երկուսդ էլ խելքներդ գլուխներդ հավաքեք, թե չէ կդիմեմ Խնամակալության և հոգաբարձության մարմնին, երեխային ձեռքներիցդ կվերցնեմ»:

43-ամյա Ս.Ա.-ին Մալաթիայի բաժնում անվանել են «սեփական մարդու դեմ գործ տվող», իսկ երբ կինը շարունակել է պնդել իր բողոքը, մեղադրել են՝ «ճիշտ տղամարդ ընտրեիր...»: Նույն բաժնում տհաճ փորձառություն է ունեցել նաև 37-ամյա Ա.Բ.-ն, որի հարցաքննության ժամանակ քննիչն ասել է. «Վա՛յ, որտեղի՞ց ես դրան գտել», «բա որ այդպիսին էր, ինչի՞ ես գնացել, հետո հետ եկել»:

Եվրոպայի խորհրդի կողմից հրատարակված «Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների և դատախազների վերապատրաստման» ձեռնարկի հիման վրա ստեղծված «Կանանց համար արդարադատության մատչելիություն» իրավաբանների համար ձեռնարկում նշվում է, որ դատախազները պետք է վերահսկեն քննության և ապացույցների հավաքման գործընթացի օրինականությունը և համոզվեն, որ քննիչները բարեխիղճ են եղել և հարգել են մարդու իրավունքների չափանիշները[9]: Այնինչ հարցազրույցի մասնակից կանանց իրավունքները երբեմն հենց քննիչներն են ոտնահարել: 36-ամյա Ն.Ս.-ին թեև ուղղակի վիրավորանքներ չեն հասցրել, սակայն հարցաքննությունից հետո Վաղարշապատի ոստիկանության բաժնի երեք տղամարդ քննիչներ երեկոյան ժամերին «Viber» հավելվածով զանգել են նրան անձնական բնույթի շփումներ հաստատելու նպատակով, ինչը խիստ վիրավորել է վերջինիս արժանապատվությունը: Կինը ստիպված է եղել դիմել ծանոթ պաշտոնյայի, որպեսզի

9 «Կանանց համար արդարադատության մատչելիություն» իրավաբանների համար ձեռնարկ, էջ 20, https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282:

վերջինս զսպի քննիչների գործողությունները: Մեկ այլ կին՝ 44-ամյա Ն.Բ.-ն, պատմել է, որ երբ ոստիկանության Շենգավիթի բաժնում հուզմունքից դողացել է, տղամարդ քննիչը թիկունքից մոտեցել է իրեն, ձեռքերով սեղմել է ուսերն ու ասել. «Մի՛ դողա»: Նույն բաժնում 42-ամյա Թ.Մ.-ին ծաղրել են. «Իմ ու նախկին ամուսնուս առերես հարցաքննության ժամանակ ձեռ էին առնում, երկուսիս խոսքերի վրա էլ խնդում էին»: Իսկ 39-ամյա Փ.Կ.-ին ոստիկանության Էրեբունու բաժնում հարցրել են. «Ձեզ Ձեր փաստաբա՞նն է սովորեցրել, որ գաք, այսպիսի բաներ գրեք»:

Ոստիկաններն ու քննիչները կանանց ապախրախուսում են բողոքել

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան մասնակից պետություններին հանձնարարում է խրախուսել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հաղորդումների ներկայացումը[10], սակայն խորքային հարցազրույցներին մասնակցած կանանց մեծամասնությունը հակառակ վերաբերմունք է նկատել ոստիկանական բաժիններում: Կանայք նշել են, որ իրենք անվտանգ ու ապահով չեն զգացել իրենց ոստիկանությունում, և որ քննիչները չեն ցանկանում լսել և աջակցել իրենց, հակառակը՝ շատերը փորձել են կանանց ապախրախուսել հաղորդում ներկայացնել:

37-ամյա Ա.Բ.-ին Մալաթիայի բաժնում քննիչն ասել է. «Ինչ էլ եկել ես ստեղ, ոտդ ոտիդ գցած պատմում ես, ինձ քո լիրիկական զեղումները չեն հետաքրքրում»: Իսկ 17-ամյա Ա.Ի.-ին, համոզելու համար, որ չբողոքի, Վանաձորի ոստիկանության ներկայացուցիչն իր անձնական օրինակն է բերել. «Ասում էր՝ բալե՛ս, մենք էլ որ խմած ենք լինում, մի հատ խփում ենք մեր կանանց, հիմա ի՞նչ, պիտի տնից գնա՞ն...»: Ոստիկանության Մաշտոցի բաժնում Ն.Բ.-ին ապախրախուսելու նպատակով մեղադրել են իր անձնական

10 «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 27, https://rm.coe.int/168046246d:

կյանքը իրավապահներին ներկայացնելու համար. «Իրենցից մեկն ինձ ասաց՝ ինչի՞ եք մեզ մտցնում ձեր անկողին, մենք չենք կարող մտնել մատանու ու մատի արանքը: Իսկ բացատրություն վերցնող քննիչն անընդհատ շտապեցնում էր, ասում էր՝ արագացրո՛ւ, տեղ պիտի գնանք: Այնքան տհաճ մթնոլորտ էր, որ ես ասացի՝ տվե՛ք, ստորագրեմ, գնամ: Այնտեղից փախել եմ ուղղակի»,- պատմել է 44-ամյա Ն.Բ.-ն: Նույն բաժնում 37-ամյա Ք.Վ.-ին քննիչը հարցրել է. «Հիմա ի՞նչ, բողո՞ք ես գրելու, երեխաներիդ հայրն է»:

«Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկում նշվում է, որ «որոշում կայացնելու վրա չպետք է ազդեն այն մոտեցումները, որ գենդերային բռնության որոշ ձևեր, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը կամ հետապնդելը, պակաս կարևորություն ունեն, քան այլ հանցագործություններ, որ դրանք «ընտանեկան հարցեր են», կամ որ դրանք հասարակության լայն շերտերի համար վտանգ չեն ներկայացնում»[11]: Բռնության ենթարկված կանայք, սակայն, նշել են, որ ընդհանուր առմամբ իրավապահները հակված չեն արձանագրելու բռնության վերաբերյալ բողոքներ, երբեմն անգամ բաց տեքստով հայտարարում են, որ գործ չեն հարուցելու: «Նորից թուղթ պիտի սևացնենք, մեկ ա, գործ չեմ հարուցելու»,- 43-ամյա Ս.Ա.-ին ասել է Մալաթիայի բաժնի քննիչը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան մասնակից պետություններին հանձնարարում է նախաքննության և դատաքննության փուլերում պաշտպանել տուժողներին ճնշումներից[12]: Հարցազրույցի մասնակից կանայք պատմել են նախաքննության ընթացքում իրենց նկատմամբ ճնշումների մասին: Մասնավորապես, բռնարարները հաճախ են սպառնացել կանանց, սակայն վերջիններիս ահազանգերի հիման վրա հազվադեպ են հարուցվել քրեական գործեր: «Հա ի՞նչ

11 «Կանանց համար արդարադատության մատչելիություն» իրավաբանների համար ձեռնարկ, էջ 21, https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282:

12 «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 56.1, ա, https://rm.coe.int/168046246d:

անենք, հենց ընենց սպառնում ա, փաստեր չկան, որ կիրագործի, մենք չենք կարող հետևել Ձեզ անընդհատ»,- 45-ամյա Ի.Ա.-ին ասել են ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում: Ավելին՝ երբեմն սպառնալիքներ հնչել են անգամ քննիչի ներկայությամբ՝ հարցաքննության ժամանակ, սակայն դրան ևս իրավական ընթացք չի տրվում: «Առերես հարցաքննության ժամանակ ասում էր՝ սպանելու եմ ձեզ: Քննիչին ասում եմ՝ գրե՛ք, որ սպառնում է, չգրեց»,- պատմել է 42-ամյա Թ.Մ.-ն: Նման միջադեպ է եղել նաև 28-ամյա Հ.Բ.-ի և նրա նախկին ամուսնու հարցաքննության ժամանակ. «Քննիչի ներկայությամբ նախկին ամուսինս ասաց՝ եթե գործը հասնի դատարան, քո սև օրերը կսկսվեն: Քննիչը չարձանագրեց դա: Երբ գնացի, որ գործը վերցնեմ, հիշեցրի իրեն այդ բառերը, նա էլ ասաց՝ հա դե, ասել ա, բայց հո չի արել: Փաստորեն պիտի աներ, նոր արձանագրեին»,- պատմել է Հ.Բ.-ն:

Իրավապահները փորձում են հաշտեցնել բռնարարին և զոհին

«Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկն անդրադառնում է նաև վեճերի այլընտրանքային լուծմանը՝ ընդգծելով, որ երբ այն կիրառվում է ընտանեկան բռնության գործերով, հիմնվում է այն սխալ պատկերացման վրա, որ բռնության համար հավասարապես մեղավոր են թե՛ կատարողը, թե՛ զոհը, և որ երկու կողմերին էլ անհրաժեշտ է զուսպ վարքագիծ դրսևորել խնդիրը լուծելու համար: «Այս մոտեցմամբ նվազեցվում է հանցագործության լրջությունը: Ընդհանուր ձևակերպմամբ՝ այն նաև հակասում է իրավունքի գերակայությանը և օրենքի առջև կանանց հավասարությանը, քանի որ դատական համակարգի հիմնական շրջանակներից դուրս է մղում այնպիսի լուրջ հանցագործություններ, ինչպիսիք են կանանց նկատմամբ բռնարարքներ ներառող հանցագործությունները»[13]: Հակառակ սրան՝ հարցազրույցի մասնակից կանանցից շատերը պատմել են, որ իրավապահ մարմինների տարբեր ներկայացուցիչներ փորձել են որպես վեճի լուծման այլընտրանք առաջարկել բռնության զոհի

13 «Կանանց համար արդարադատության մատչելիություն» իրավաբանների համար ձեռնարկ, էջ 42, https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282:

հաշտեցումը բռնարարի հետ: Վաղարշապատի ոստիկանության բաժնում 36-ամյա Ն.Ս.-ին քննիչն ասել է. «Ես վանքում մոմ եմ վառելու, որ դուք բարիշեք»: 44-ամյա Ն.Բ.-ն էլ զանգ է ստացել իրենց թաղամասը սպասարկող թաղային լիազորից, որը փորձել է համոզել կնոջը, որ հաշտվի բռնարար տղամարդու հետ: «Ասացի՝ ես ձեզ դիմել եմ, որ ինձ պաշտպանե՞ք, թե՞ որ հաշտեցնելու փորձեր անեք: Հետո պարզեցի, որ մտերիմ է նախկին ամուսնուս հետ, միասին սեղան են նստում, խմում են...»,- պատմել է Ն.Բ.-ն: Վանաձորի ոստիկանությունում 17-ամյա Ա.Հ.-ին քննիչն ասել է. «Դու իմացիր, որ վաղը քո երեխային պատասխան ես տալու, երեխան քեզ մեղադրելու է, որ իր հորից բաժանվել ես»: Նույն քննիչը նաև փորձել է ապախրախուսել բռնության ենթարկված աղջկան ապաստարան գնալ: «Ասում էր՝ լավ մտածի, էնտեղ բոմժանոց ա, հանրակացարանից վատ պայմաններ են, ով գնացել է, դժգոհ է եղել: Մի ուրիշն էլ ձևացնում էր, թե իբր զանգում է թեժ գծին, ու պատասխանող չկա»,- պատմել է Ա.Հ-ին:

Ոստիկանական բաժիններում հանդիպող այլ խոչընդոտներ

Հարցազրույցի մասնակիցներից շատերի համար ոստիկանական բաժիններ մտնել-դուրս գալը ոչ միայն մեծ տհաճությամբ է ուղեկցվել, այլև կրկին բռնության ենթարկվելու վտանգով, օրինակ, ՇԴ/0151/01/20 գործի մեղադրական եզրակացության համաձայն, բռնարարի ընտանիքը կնոջը առևանգել է Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի բաժնից դուրս գալիս:

Կանանցից մի քանիսը հիշել են, որ առերես հարցաքննությունների ժամանակ նախկին ամուսինները հայհոյել են իրենց, քննիչները թեև փորձել են զսպել բռնարարներին, սակայն դա առանձնակի արդյունավետություն չի ունեցել: Ընդհանուր առմամբ առերես հարցաքննությունները բռնության ենթարկված կանանց համար մշտապես ուղեկցվել են տագնապի ու վախի զգացումով, արժանապատվության նվաստացմամբ և կրկին բռնության ենթարկվելու վտանգով: Թեև օրենսդրությունը թույլ տալիս է տեսակապով հարցաքննություն և առերեսում իրականացնել, սակայն ըստ «Կանանց աջակցման կենտրոն»

հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Զարուհի Մեջլումյանի՝ ընտանեկան բռնության գործերով դա չի կիրառվել՝ չնայած տուժողների ներկայացուցիչ փաստաբանների միջնորդություններին:

Կանանցից մի քանիսը պատմել են, որ տղամարդ քննիչներն իրենց ներկայությամբ հայհոյանքներով են խոսել միմյանց հետ, նաև երկարատև ու տհաճ հայացքներ են նետել իրենց վրա: «Երբ նստած ես քննիչի առջև, ցուցմունք ես գրում, սենյակի դուռը չի փակվում, ամբողջ շենքի աշխատողները ելումուտ են անում սենյակում, մտնում են, ուշադիր նայում քեզ, հայացքով զննում»,- պատմել է 44-ամյա Ն.Բ.-ն: Հարցազրույցի մասնակից որոշ կանայք արձանագրել են, որ վերաբերմունքի զգալի տարբերություն է եղել, երբ իրենք ոստիկանություն են ներկայացել փաստաբանի հետ: Սակայն ոչ բոլորը կամ ոչ բոլոր փուլերում են նրանք այդ հնարավորությունն ունեցել: Հաճախ կանայք, զանգահարելով ոստիկանության որևէ բաժին, անմիջապես հրավիրվում են ցուցմունք տալու և չեն հասցնում կապ հաստատել աջակցման կենտրոնների հետ և ձեռք բերել անվճար փաստաբանական ծառայություններ: Այդ հնարավորության մասին կանայք հիմնականում տեղյակ չեն լինում:

Վերոնշյալ դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարած կանանց գերակշիռ մեծամասնությունը, այնուամենայնիվ, «Խորհուրդ կտա՞ք բռնության ենթարկված կնոջը դիմել ոստիկանություն» հարցին դրական պատասխան է տվել: Շատերը նշել են, որ նախ արժե դիմել կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններ, այնուհետև նրանց աջակցությամբ՝ ոստիկանություն, որպեսզի նրանց իրավունքները չոտնահարվեն նաև ոստիկանությունում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

2.1. Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները

Բռնության ենթարկված կանանց համար արդարադատության մատչելիությունը և դրան առնչվող խնդիրներն ու խոչընդոտները բացահայտելու նպատակով 2021 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը մշտադիտարկվել են ընտանեկան բռնության գործերով դատական նիստերը: Նշված ժամանակահատվածում դիտարկվել է 18 քրեական գործով (5-ը՝ Երևանում, 13-ը՝ մարզերում) 40 դատական նիստ, որոնցից 20-ը՝ մայրաքաղաքում, 20-ը՝ մարզերում:

Մշտադիտարկված գործերն են՝ ԱՎԴ/0068/01/21, ԱՎԴ/0156/01/21, ԱՐԱԴ/0021/01/19, ԱՐԱԴ/0073/01/21, ԱՐԴ/0036/01/21, ԱՐԴ/0081/01/20, ԱՐԴ/0164/01/20, ԱՐԴ/0170/01/21, ԱՐԴ/0190/01/19, ԱՐԴ/0203/01/20, ԱՐԴ/0277/01/21, ԵԴ/0367/01/18, ԵԴ/0670/01/21, ԵԴ/1057/01/20, ԵԴ/1886/01/21, ԿԴ/0030/01/21, ՇԴ/0151/01/20: Եվս մեկ գործով դիտարկվել է դատախազի որոշման դեմ դատարան բերված բռնության ենթարկված կնոջ բողոքի քննությունը:

Մշտադիտարկված բոլոր գործերով, բացառությամբ մեկի, կնոջ նկատմամբ բռնարարքը գործել են տղամարդիկ: Քրեական գործերը հարուցված են տվյալ ժամանակահատվածում գործող

ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով.

հոդված 118 (ծեծը)՝ 7 գործ/դրվագ,

հոդված 113.1 (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը)՝ 4 գործ/դրվագ,

հոդված 137.1 (սպանության սպառնալիքը)՝ 3 գործ/դրվագ,

հոդված 147.1 հոդված (մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելը)՝ 3 գործ/դրվագ,

հոդված 353.1 (դատական ակտը դիտավորությամբ չկատարելը)՝ 3 գործ/դրվագ,

հոդված 131.2, կետ 1 (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ մարդուն առևանգելը)՝ 2 գործ/դրվագ,

34-104-րդ հոդվածների 1-ին մաս (մահափորձ)՝ 1 գործ/դրվագ,

հոդված 110.1 (ինքնասպանության հասցնելը)՝ 1 գործ/դրվագ,

հոդված 117 (առողջությանը թեթև վնաս պատճառելը)՝ 1 գործ/դրվագ,

հոդված 112.1 (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը)՝ մեկ գործ/դրվագ,

հոդված 176.1 (կողոպուտը)՝ մեկ գործ/դրվագ,

հոդված 141 (սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ)՝ մեկ գործ/դրվագ:

Մշտադիտարկման ժամանակահատվածում դատական գործերից միայն 9-ով է կայացվել դատական ակտ, մնացած գործերով դատաքննությունն ընթացքի մեջ է զեկույցի հրապարակման պահին: Ավարտված գործերից կեսից ավելիի՝ 5-ի դեպքում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության

ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում է կայացվել, երկուսով կայացվել է մեղադրական դատավճիռ, մեկով դատարանը բավարարել է կնոջ բողոքն ընդդեմ քրեական գործ չհարուցելու մասին դատախազության որոշման, ևս մեկ գործ ավարտվել է կողմերի հաշտությամբ: Երկու մեղադրական դատավճիռների դեպքում էլ դատարանն առավել մեղմ պատիժ է սահմանել, քան միջնորդել է մեղադրող դատախազը:

«Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկում նշվում է, որ դատախազները և դատավորները կանանց նկատմամբ բռնության գործերով պետք է հավաստիանան, որ պահանջված պատիժն արտացոլում է հանցագործության բնույթի լրջությունը: «Նման դեպքերում պատժի նշանակումը պետք է լինի արդար, ոչ խտրական, համաչափ, միասնական և հետևողական: Պատժի նշանակման առաջնային նպատակը պետք է լինի բռնության կրկին գործադրումը կանխելը, զոհին պաշտպանելը և կատարողին պատասխանատվության ենթարկելը: Հանցագործություն կատարողի ռեաբիլիտացիան (առողջացումը) չպետք է լինի քրեական պատժի առաջնային նպատակը»[14]: Դատավորները պետք է հաշվի առնեն մեղադրյալի և տուժողի հարաբերությունների ընթացքում տեղի ունեցած բռնության դրսևորման այլ դրվագներ ևս, որոնց վերաբերյալ, հնարավոր է, քրեական գործ չի հարուցվել: «Արդյո՞ք սա կատարողի առաջին հանցագործությունն է: Պարտադիր չէ, որ դրա արդյունքում պատիժը կրճատվի: Շատ իրավախախտներ, որոնք առաջին անգամ են հայտնվում դատարանում, նախկինում էլ են բռնություն գործադրել, սակայն նրանց նկատմամբ երբևէ մեղադրանք չի ներկայացվել: Դատախազներն ու դատավորները պետք է օգտվեն տեղեկատվության այլ աղբյուրներից՝ կատարողի ոտնձգությունների պատմությունը բացահայտելու համար»[15]:

14 Նույն տեղում, էջ 31:

15 Նույն տեղում, էջ 31:

Մշտադիտարկված գործերի դատական ակտերում որևէ անդրադարձ չի եղել մեղադրանքի շրջանակից դուրս կատարված բռնություններին:

Բացի մեղմ պատիժներից՝ մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են խնդիրներ՝ կապված գործի՝ ողջամիտ ժամկետներով քննության, դատավարությանը մասնակցող կնոջ անվտանգության, ինչպես նաև նրա նկատմամբ դատարանի և դատավարության մասնակիցների վերաբերմունքի հետ: Այս խնդիրներին անդրադառնում ենք առավել մանրամասն ստորև:

Դատաքննության երկար ընթացքի պատճառները

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան սահմանում է, որ կանանց նկատմամբ բռնության գործերով նախաքննական ու դատական վարույթները պետք է իրականացվեն առանց անհարկի ձգձգումների[16]: Իսկ «Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկում հիշատակվող ընդհանուր պատշաճ գործելակերպը կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ գործերով արագացված դատաքննության կիրառումն է արագացված դատաքննություն իրականացնող և մասնագիտացված դատարանների միջոցով: «Մի շարք երկրներում հանդիպող պատշաճ գործելակերպ է համարվում հավասարության հարցերով մասնագիտացած և քվազի-դատական մարմիններին քննչական իրավասություն շնորհելը»[17]:

Մշտադիտարկված գրեթե բոլոր գործերի դատաքննությունները, սակայն, ընթացել են անհարկի ձգձգումներով, ինչի հետևանքով կայացված դատական ակտերի ուղիղ կեսի դեպքում բռնարարն ազատվել է քրեական պատասխանատվությունից: Բռնարարին

16 «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 49.1, https://rm.coe.int/168046246d:

17 «Կանանց համար արդարադատության մատչելիություն» իրավաբանների համար ձեռնարկ, էջ 22, https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282%D6%89:

առաջադրված մեղադրանքների մեծամասնությունը հիմնված է եղել ոչ մեծ ծանրության հանցանքների վրա, որոնց համար նախատեսված են թեթև պատժատեսակներ, և որոնց վաղեմության ժամկետը ընդամենը երկու տարի է (տվյալ ժամանակահատվածում գործող քրեական օրենսգրքով):

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը նախատեսում էր, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.
2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.
3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.
4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

Հաշվի առնելով նախաքննական մարմնի, դատախազության և դատարանների ծանրաբեռնվածությունը՝ սա բավականին սեղմ ժամկետ է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ ունենալու համար:

Դատարանների ծանրաբեռնվածությունը

Դատաքննության ընթացքը երկար է տևում դատարանների ծանրաբեռնվածության պատճառով: Նույն գործով երկու նիստերի միջև ընկած ժամանակահատվածը մշտադիտարկված գործերով միջինում եղել է ավելի քան 47 օր: Նվազագույն օրերի միջակայքը եղել է 6, իսկ առավելագույնը՝ 127 օր: Դատական նիստերի միջև երկարատև ժամանակահատվածները դատավորները հիմնականում բացատրում են իրենց ծանրաբեռնվածությամբ, երբեմն էլ պատճառը լինում է դատավորների արձակուրդի կամ

գործուղման օրերի հետ համընկնումը: Օրինակ՝ ԱՐԴ/0036/01/21 գործով 2022 թվականի ապրիլի 1-ին կայացած դատական նիստի ընթացքում գործի քննությունը հետաձգվել է ավելի քան երկու ամսով: Եվ թեև տուժողի ներկայացուցիչը դատավորին հայտնել է իր մտահոգությունը, որ այս գործով վաղեմության ժամկետը մոտենում է, և նիստերի միջև երկարատև ժամանակահատվածների պատճառով գուցե չհասցնեն ժամանակին ավարտել դատավարությունը, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Ադամյանը հայտնել է, որ դատարանի զբաղվածությունը թույլ չի տալիս նիստը նշանակել ավելի վաղ, քան հունիսի 6-ը: Եվ ինչպես ենթադրել էր փաստաբանը, հանցանքի վաղեմության ժամկետը լրանալու հիմքով մեղադրյալն այս գործով ազատվեց քրեական պատասխանատվությունից:

Հազվադեպ է լինում, երբ գործի քննությունն ավարտվում է 2-3 դատական նիստերի ընթացքում: Միջինում նիստերի քանակը 10-ից ավելի է լինում: Մշտադիտարկված գործերով նշանակված նիստերի նվազագույն քանակը եղել է 2, առավելագույնը՝ 42[18]: ԵԴ/1886/01/21 գործը բացառություն է եղել մշտադիտարկված գործերի շարքում. գործի դատաքննությունը սկսվել և ավարտվել է նույն օրը: Տվյալ գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մանվել Շահվերդյանը նշանակել է ընդամենը 2 դատական նիստ: Առաջին դատական նիստը չի կայացել մեղադրյալի չներկայանալու պատճառով: Երկրորդ դատական նիստի ընթացքում դատավորին հաջողվել է ավարտին հասցնել քննությունը և նույն օրը հրապարակել դատավճիռը: Դատավոր Շահվերդյանը տվյալ գործի քննության ընթացքում օրինակելի վարքագիծ է դրսևորել, որը, սակայն, բացառություն է հայաստանյան դատական համակարգում:

18 Մշտադիտարկված գործերի մեծամասնության դատաքննությունները չեն ավարտվել նախքան զեկույցի ամփոփումը, ուստի նշանակված նիստերի քանակի միջինացված տվյալներն հաշվարկվել են նախքան զեկույցի հրապարակումն ընկած ժամանակահատվածում նշանակված նիստերի քանակով:

Դատավարության մասնակիցների բացակայությունը և նիստի տևողությունը

Դատական համակարգի ծանրաբեռնվածության օբյեկտիվ պատճառից բացի՝ գոյություն ունեն նաև այլ գործոններ, որոնք նպաստում են գործերի քննության ձգձգմանը:

Մշտադիտարկված դատական նիստերից շատերը պարզապես չեն կայացել դատավարության մասնակիցների բացակայության պատճառով, ընդ որում՝ մշտադիտարկված գործերով ամենից շատ բացակայել են մեղադրող դատախազները: Մեղադրողի բացակայության վերաբերյալ դատական նիստի ժամանակ հիմնականում ներկայացվել են բանավոր՝ հեռախոսազրույցի միջոցով փոխանցված պատճառաբանություններ՝ այլ դատական նիստին մասնակցություն, ծանրաբեռնվածություն, Գլխավոր դատախազությունում զեկույցի ներկայացում, առողջական խնդիրներ և այլն: Արձանագրվել են դեպքեր, երբ դատախազն առհասարակ չի հայտնել իր բացակայության մասին: Օրինակ՝ ԱՐԴ/0036/01/21 գործով 2022 թվականի հունիսի 6-ին նշանակված նիստին դատախազը չի ներկայացել և չի կապվել դատավորի աշխատակազմի հետ՝ պարզաբանելու, թե ինչու է բացակայում նիստից: Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Ադամյանը նիստը հետաձգելիս ընդամենը հույս է հայտնել, որ հաջորդ նիստին դատախազը կներկայանա: Նույն նիստին չի ներկայացել նաև պաշտպանը, որը, գրավոր դիմելով դատարանին, խնդրել է հետաձգել նիստը՝ պատճառաբանելով, թե մեկ այլ գործով խափանման միջոցը փոխելու միջնորդության քննության նիստի է մասնակցելու: Կարելի է ենթադրել, որ դատախազը կապի մեջ է եղել պաշտպանի հետ և, տեղյակ լինելով, որ նա չի ներկայանալու, և նրա խնդրանքով նիստը հետաձգվելու է, ինքն էլ չի ներկայացել՝ հարկ չհամարելով անգամ կապ հաստատել դատարանի հետ: Ի դեպ, այս գործով ևս լրացել է վաղեմության ժամկետը, և դատավորը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում է կայացրել:

Դատախազների բացակայությունների և դրանց մասին չիրազեկելու նկատմամբ այլ վերաբերմունք է դրսևորել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մարինե Մելքոնյանը: Վերջինս ԵԴ/0670/01/21 գործով 2021 թվականի հոկտեմբերի 21-ին նշանակված նիստին դատախազի չներկայանալը և նախքան դատական նիստը իր բացակայության մասին չիրազեկելը համարեց անհարգելի և հայտարարեց, որ դրա վերաբերյալ գրություն կուղարկվի վարչական շրջանի դատախազությանը:

Դատաքննության պարբերաբար հետաձգումները խիստ հիասթափեցնող են տուժողների համար, դատական նիստերին ներկայանալը և մասնակցելը նրանց տհաճություն են պատճառում և ֆինանսական խնդիրներ են ստեղծում, քանի որ նրանցից շատերը միայնակ են հոգում իրենց և իրենց երեխաների ֆինանսական և սոցիալական խնդիրները: Օրինակ՝ ԱՐԴ/0190/01/19 գործով, երբ հերթական անգամ դատական նիստը չի կայացել դատախազի չներկայանալու պատճառով, տուժողը դատարանում հայտարարել է, որ իր հինգ երեխաները զրկվել են օրվա հացից դատախազի պատճառով: Տուժողը օրավարձով է աշխատում և տվյալ օրը աշխատանքի չի գնացել, որպեսզի մասնակցի դատական նիստին, սակայն միայն դատարան ներկայանալուց հետո է իրազեկվել, որ նիստը չի կայանալու: Քիչ չեն նաև գործերը, որոնց ներկայանալու համար տուժողը գալիս է այլ մարզից, քանի որ ամուսնալուծությունից հետո փոխել է իր բնակության հասցեն:

Դատական նիստերի հաճախակի հետաձգման պատճառ է եղել նաև մեղադրյալների կամ նրանց պաշտպանների չներկայանալը: Երբեմն սա կարող է լինել պաշտպանական կողմի ռազմավարությունը՝ հետաձգել գործի քննությունն այնքան ժամանակ, որպեսզի լրանա հանցանքի վաղեմության ժամկետը: Մշտադիտարկված 18 գործերից միայն 3-ով է մեղադրյալը կալանքի տակ եղել: Մնացած գործերով որպես խափանման միջոց ընտրվել է երկրից չբացակայելու մասին ստորագրությունը: Այլ կերպ ասած՝ մեղադրյալները ազատության մեջ են եղել, ինչը նրանց հնարավորություն է տվել որոշ դատական նիստերին

չներկայանալու: Ընդ որում՝ նման դեպքերում դատավորը ոչ միշտ է բերման ենթարկելու վերաբերյալ որոշում կայացրել: Ազատազրկման հետ կապ չունեցող խափանման միջոցը հիասթափեցնող է պետության պաշտպանությանը ապավինած կանանց համար, քանի որ բռնարարի ազատազրկումը նրանք հաճախ դիտարկում են որպես իրենց անվտանգության միակ երաշխիք:

Որոշ դատական նիստեր հետաձգվել են տուժողի և/կամ նրա ներկայացուցչի չներկայանալու պատճառով, ինչը, սակայն, հազվադեպ է տեղի ունեցել: Տուժողները և նրանց ներկայացուցիչները սովորաբար շահագրգռված են, որպեսզի գործի քննությունը հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտվի:

Դատաքննությունների ձգձգման պատճառներից մեկն էլ դատական նիստերի կարճ տևողությունն է եղել: Մշտադիտարկված դատական նիստերի միջին տևողությունը ընդամենը 25-50 րոպե է եղել: Այդ ժամանակահատվածում հաճախ հնարավոր չի եղել առարկայական ու բովանդակալից դատաքննություն իրականացնել: Դատական նիստերի կարճ տևողությունը հիմնականում երեք պատճառ ունի. մեղադրող դատախազները խնդրում են տվյալ պահին ընթացող դատական նիստը հետաձգել, քանի որ այլ դատական նիստի պետք է մասնակցեն (1), դատավորը ստիպված է լինում դատական նիստը հետաձգել, քանի որ մոտենում է մեկ այլ գործով նշանակված դատական նիստի ժամը (2), դատական նիստերը հիմնականում ուշացումով են սկսվում, և քիչ ժամանակ է մնում տվյալ օրվա նիստի ընթացքում աշխատելու համար (3):

Մշտադիտարկված դատական նիստերից միայն երկուսն են սկսվել ճիշտ ժամանակին, երկուսն էլ՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Բալայանի նախագահությամբ: Մնացած բոլոր նիստերը սկսվել են ուշացումով: Միջինում նիստերը նշանակված ժամից ավելի քան 13 րոպե ուշացումով են սկսվել: Ուշացման նվազագույն ժամանակը եղել է 4 րոպե, առավելագույնը՝ 57 րոպե: Գրեթե ոչ մի դեպքում դատավորները չեն անդրադարձել դատական նիստը ուշ սկսելու

պատճառին: Բացառություն է եղել ԵԴ/0670/01/21 գործով 2021 թվականի հոկտեմբերի 21-ին նշանակված դատական նիստը, որի ժամանակ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մարինե Մելքոնյանը հայտնեց, որ նիստը ուշացումով սկսելու պատճառը դատախազի չներկայանալն է ու զանգերին չպատասխանելը: Ուշագրավ է, որ նույն գործով մյուս դատական նիստերը ևս ուշացումով են սկսվել, սակայն դրանց դատավորը չի անդրադարձել: Դատական նիստերի ուշ մեկնարկելու պատճառը հաճախ կողմերի, մեծ մասամբ դատախազի ուշ ներկայանալն է: Բայց նաև քիչ չեն եղել նիստերը, երբ կողմերը ներկայացել են ժամանակին, սակայն դատավորը ուշ է եկել նիստերի դահլիճ: Ընդհանուր առմամբ նիստերի ուշացումով սկսվելը դատավորների կողմից չի դիտարկվում որպես խնդիր և գրեթե երբեք քննարկման առարկա չի դառնում դատական նիստի ընթացքում:

Տուժողների անվտանգությունը դատարաններում

Դատական նիստերի մշտադիտարկման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել դատական նիստի ընթացքում, ինչպես նաև դրանից առաջ և հետո տուժողի անվտանգությանը, անձեռնմխելիությանը և կրկնազոհացման հնարավոր դրսևորումների առկայությանը: Ընտանեկան բռնության գործերն առանձնահատուկ են նրանով, որ բռնությունները հիմնականում երկար տարիներ շարունակ են եղել և երբեմն շարունակվում են անգամ դատական քննության ժամանակահատվածում, հատկապես, երբ մեղադրյալն ազատության մեջ է: Դատաքննությանը մասնակցող կնոջ անվտանգությունը երբեմն վտանգվում է հենց դատարանի շենքի տարածքում կամ անգամ նիստերի դահլիճում: Կնոջ անվտանգությունն ու անձեռնմխելիությունը, ինչպես նաև նրա արժանապատվության նկատմամբ հարգանքի դրսևորումը ապահովելու հարցում առանձնակի պատասխանատվություն ունեն դատավորն ու դատախազը: Նրանք «պարտավոր են նախաձեռնել ռիսկի գնահատումներ՝ սրացած բռնության ռիսկի մակարդակը որոշելու, ռիսկը դատական վարույթի ժամանակ կառավարելու և արդարադատության համակարգի կողմից պահանջվող վերահսկողության ու միջամտության մակարդակը

որոշելու համար»[19]: «Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկում նաև նշվում է, որ «դատախազները և դատավորները պետք է զրուցեն դատավարության իգական սեռի մասնակիցների, հատկապես բռնության զոհերի հետ նրանց և նրանց ընտանիքի ցանկացած անդամի անվտանգությանը վերաբերող ծրագրերի մասին»[20], իսկ «կանանց նկատմամբ բռնության միջադեպերը պահանջում են, որ դատական համակարգում առկա լինեն կառավարման ու կարգավորման հատուկ տեխնիկաներ»[21]:

Մշտադիտարկված գործերից որևէ մեկով տուժողը չի ուղեկցվել պատկան մարմնի ներկայացուցչի կողմից, թեև բացառված չէ, որ դատական նիստից առաջ, ընթացքում կամ հետո նա կարող էր բռնության ենթարկվել մեղադրյալի և/կամ նրա հարազատների կողմից: Այնուամենայնիվ, այլ գործով եղել են նման իրավիճակներ, երբ տուժողի ներկայացուցիչը դիմել է ոստիկանություն, և նրանց ուղեկցել են դատարանի շենքից դուրս՝ անվտանգությունը երաշխավորելու նպատակով: «Դատարանի շենքի ներսում, նիստերի դահլիճում կարգադրիչների ներկայությունը զսպող դերակատարում է ունենում: Սակայն դատարանի շենքից դուրս խնդիրներ լինում են: Երբեմն խնդրում եմ, որ կարգադրիչները ուղեկցեն մեզ մինչև ավտոմեքենան: Եղել են դեպքեր, երբ ոստիկանական երկու մեքենաներով են ուղեկցել մարզից մինչև Երևան, քանի որ մեքենայով հետապնդել են մեզ: Մեկ այլ անգամ ՀՀ վերաքննիչ դատարանի շենք մոտեցել են ոստիկանի ուղեկցությամբ»,- պատմել է «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության փաստաբան Զարուհի Մեջլումյանը:

Այնուամենայնիվ, ոչ միշտ է տուժողն ունենում իր շահերը ներկայացնող փաստաբան: Մշտադիտարկված 18 քրեական գործերից միայն 10-ով անցնող տուժողներն են դատավարության

19 «Կանանց համար արդարադատության մատչելիություն» իրավաբանների համար ձեռնարկ, էջ 34, https://rm.coe.int/methodology-womens-access-to-justice-arm-pgg/16809c8282:

20 Նույն տեղում, էջ 34:

21 Նույն տեղում, էջ 35:

փուլում ունեցել ներկայացուցիչ: Բոլոր դեպքերում փաստաբանական ծառայությունը նրանց տրամադրվել է հասարակական կազմակերպությունների կողմից անվճար (9-ը՝ Կանանց աջակցման կենտրոն, 1-ը՝ Հելսինկյան ասոցիացիա), մնացած 8 գործերով տուժողները ներկայացուցիչ ունենալուց հրաժարվել են: Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ներկայացուցիչ ունենալու դեպքում տուժողը, բացի իր շահերը դատարանում ավելի արդյունավետ ներկայացնելուց, նաև որոշակիորեն նվազեցնում է դատավարության մյուս մասնակիցների և նրանց հարազատների կողմից հարձակումների ենթարկվելու վտանգը: Փաստաբանի ներկայությունը դատական նիստին, նիստից առաջ և հետո տուժողին հաղորդում է վստահություն, իսկ մեղադրյալին և/կամ նրա հարազատներին հաճախ թույլ չի տալիս մոտենալ տուժողին և զրուցել նրա հետ: Օրինակ՝ ԱՐԴ/0170/01/21 գործով 2021 թվականի հոկտեմբերի 28-ի նիստին ներկայացած տուժողը, դատարանի շենքի միջանցքում տեսնելով մեղադրյալին, վախեցել է երկրորդ հարկ՝ նիստերի դահլիճ, բարձրանալուց: Փաստաբանը դա նկատել է և խնդրել է դատական նիստերի քարտուղարին մեղադրյալին հրավիրել դահլիճ, որից հետո միայն տուժողը համարձակվել է գալ նիստերի դահլիճ: Դատարանի շենքում՝ նիստերի դահլիճից դուրս, բռնարարի և բռնության ենթարկված կնոջ հանդիպումը բացառելու նպատակով փորձագետները խորհուրդ են տալիս դատարանի շենքերն այնպես նախագծել, որ վարույթի կողմերն առանձին սպասասրահներում գտնվելու հնարավորություն ունենան[22]:

Այնուամենայնիվ, միշտ չէ, որ փաստաբանի ներկայությունը զսպող դերակատարում է ունեցել: Օրինակ՝ ԱՐԱԴ/0073/01/21 գործով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ նստավայրում 2021 թվականի դեկտեմբերի 15-ին նշանակված դատական նիստից առաջ դատարանի միջանցքում գտնվող մեղադրյալի հարազատները վիրավորական արտահայտություններ են հնչեցրել տուժողի հասցեին: Նրանցից մեկը դատարան է եկել տուժող կնոջ անձնական լուսանկարները

22 Նույն տեղում, էջ 37:

ձեռքին, որպեսզի «խայտառակ անի նրան»: Սույն գործով տուժողի ներկայացուցիչը դատարանին նիստերը դռնփակ անցկացնելու միջնորդություն է ներկայացրել, որը բավարարվել է, և մեղադրյալի հարազատները հնարավորություն չեն ունեցել ներկա լինելու նիստերի դահլիճում: Նրանք, սակայն, շարունակել են տուժողի նկատմամբ ագրեսիվ վարքագիծ դրսևորել դատարանի շենքի միջանցքում՝ միաժամանակ վիրավորական արտահայտություններ թույլ տալով նաև «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության դիտորդի հասցեին՝ կարծելով, թե նա եկել է պաշտպանելու տուժողի շահերը:

ՇԴ/0151/01/20 գործով ևս փաստաբանի ներկայությունը չի կաշկանդել մեղադրյալին՝ տուժողին վիրավորելու: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրի նստավայրում 2021 թվականի հոկտեմբերի 1-ին նշանակված դատական նիստի ընթացքում մեղադրյալը ուղիղ վիրավորանքներ է հասցրել տուժողին՝ ասելով. «Ես քեզ մայր չեմ համարե, ու ստեղ ոչ մեկ քեզ մայր չի համարե»: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարեն Բեգլարյանը նախազգուշացում է կիրառել մեղադրյալի նկատմամբ՝ դատավարության մասնակցին վիրավորելու համար: Դատական նիստի ավարտից հետո մեղադրյալը կրկնել է նույն խոսքերը, իսկ նիստերի դահլիճը լքելիս բարձր ձայնով ասել է. «Դու մայր կոչվելու իրավունք չունես, թքեմ վրեդ, կե՛ղտ»: Արդեն դատարանի շենքից դուրս մեղադրյալը անհասցե բացականչել է. «Կկտրտեմ, մաս-մաս կենեմ»: Տուժողը մտավախություն է ունեցել, որ դատական նիստից հետո մեղադրյալը կարող է հետապնդել իրեն, և փաստաբանի հետ սպասել է դրսում այնքան, մինչև մեղադրյալը հեռանա: «Վախից մարմինս դողում է»,- ասել է տուժողը փաստաբանին: Դատական կարգադրիչներից որևէ մեկը տուժողին չի ուղեկցել ո՛չ դատարանի շենքում, ո՛չ շենքից դուրս:

Դատարանները պետք է քայլեր ձեռնարկեն այսպիսի միջադեպերից խուսափելու համար: «Պատշաճ գործելակերպ է համարվում կողմերին որոշակի ժամանակային ընդմիջումով դատարանից դուրս թողնելը՝ զոհին թույլ տալով առաջինը դուրս գալ դատարանից և անհրաժեշտության դեպքում անվտանգության

աշխատակիցների ուղեկցություն առաջարկելով»[23] այն դեպքերում, երբ մեղադրյալը կալանավորված չէ:

Դատարանի և դատավարության մասնակիցների վերաբերմունքը տուժող կնոջ նկատմամբ

Մշտադիտարկման ընթացքում ուշադրության կենտրոնում է եղել դատարանի և դատավարության մասնակիցների վերաբերմունքը տուժող կնոջ նկատմամբ: Մշտադիտարկված գործերով դատական նիստերը նախագահող դատավորների մեծամասնությունը տուժողի նկատմամբ հիմնականում դրսևորել է հարգալից և չեզոք վերաբերմունք: Բացառություն է եղել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Բալայանը, որը տուժողին դիմել է «դու»-ով: Նույն դատավորը, լսելով տուժողի ցուցմունքն այն մասին, որ նախկին ամուսինն իրեն հետապնդում է, ձայնային հաղորդագրություններ է ուղարկում, ծանոթանալով հաղորդագրությունների բովանդակությանը, հարցրել է. «Ի՞նչ կա սրա մեջ որ...»: Իսկ դատական նիստի ընդմիջման ժամանակ դատավորը կշտամբել է կնոջը՝ ասելով. «Էս էրեխուն բերել եք, որ հոր դեմ ցուցմունք տա՞»՝ նկատի ունենալով, որ երեխան դատարանում պետք է վկայություն տա հոր դեմ: Նույն դատավորը տուժողի հարցաքննության ժամանակ նրան պարբերաբար ընդհատել է, քանի որ չի ցանկացել լսել մանրամասներ նախկին ամուսնու վարքագծի մասին: Դատավորը ուշադրություն է դարձրել բացառապես մեղադրյալի կողմից դատարանի որոշումը խախտելու դրվագի վրա, քանի որ միայն դա է եղել մեղադրանքի հիմքում: Ի դեպ, այս առումով դատավոր Բալայանը բացառություն չէ: Մշտադիտարկված բոլոր գործերով տուժողի հարցաքննությունների ժամանակ դատավորները չեն ցանկանում լսել, թե ինչպիսի վարքագիծ է դրսևորել մեղադրյալը առաջադրված մեղադրանքի շրջանակից դուրս: Սա ապացուցում է, որ դատավորները հաշվի չեն առնում ընտանեկան բռնության հանցատեսակի էությունն ու առանձնահատկությունը և ցանկանում են գործը դիտարկել միայն դրվագային՝

23 Նույն տեղում, էջ 34:

սահմանափակվելով մեղադրանքի հիմքում դրված փաստերով: Այնինչ փորձագետները խորհուրդ են տալիս ուսումնասիրել բռնարարի ոտնձգությունների պատմությունը: Ավելին՝ բռնության շարունակական կամ հաճախակի դրսևորումների մասին այլ աղբյուրներից տեղեկություն ստանալու պարագայում մեղադրյալի՝ նախկինում դատված չլինելը չպետք է անպայմանորեն պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկվի, քանի որ «շատ իրավախախտներ, որոնք առաջին անգամ են հայտնվում դատարանում, նախկինում էլ են բռնություն գործադրել, սակայն նրանց նկատմամբ երբևէ մեղադրանք չի ներկայացվել»[24]:

Մշտադիտարկված բոլոր գործերով մեղադրող դատախազները հարգալից վերաբերմունք են ցուցաբերել տուժողի նկատմամբ: Նույնպիսի վերաբերմունք, սակայն, չի դրսևորել պաշտպանական կողմը: Հիմնականում մեղադրյալները, հաճախ նաև նրանց պաշտպանները այնպիսի հարցադրումներ կամ արտահայտություններ են թույլ տվել տուժողի նկատմամբ, որոնք նվաստացնում են վերջինիս արժանապատվությունը: Բավականին հաճախ են հանդիպել դեպքեր, երբ մեղադրյալն իր հարցաքննության ժամանակ կնոջը մեղադրել է անբարոյական պահվածքի համար՝ դատարանում ներկայացնելով այնպիսի տեղեկություններ, որոնք գործի հետ առնչություն չունեն:

Դատավորները սեփական նախաձեռնությամբ կամ տուժողի ներկայացուցչի առարկությունից հետո հիմնականում թույլ չեն տալիս մեղադրյալին շարունակել նման վարքագիծը: Օրինակ՝ ԿԴ/0030/01/21 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Աբովյան նստավայրում 2022 թվականի մարտի 18-ին նշանակված նիստի ընթացքում, երբ տուժողի հարցաքննության ժամանակ մեղադրյալը պարբերաբար նրան մեղադրել է իր մայրական պարտականություններում թերանալու և ինչ-որ տղամարդու հետ սեռական կապ ունենալու համար, դատավոր Գոռ Շահբազյանը մեղադրյալին նախ նկատողություն է արել, ապա զրկել է հարցեր տալու իրավունքից: Իսկ ՇԴ/0115/01/20

24 Նույն տեղում, էջ 31:

գործով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրի նստավայրում 2021 թվականի հոկտեմբերի 1-ին նշանակված նիստի ընթացքում դատավոր Կարեն Բեգլարյանն արձանագրել է, որ մեղադրյալի պաշտպանները տուժողին տալիս են այնպիսի հարցեր, որոնք «կրկնազոհացման են վերածում հարցաքննությունը»:

«Կանանց համար արդարադատության մատչելիություն» ձեռնարկում նշվում է, որ ընտանեկան բռնության գործերով կա հավանականություն, որ մեղադրյալը «կօգտագործի զոհին ահաբեկելու կամ դատական գործընթացում մանևրելու տակտիկաներ (այնպիսիք, ինչպիսիք են կատաղի, ակնդետ հայացք նետելը, հուզական ելույթով հանդես գալը և այլն): Դատավորները պետք է վճռական գործողությունների դիմեն նախազգուշացում տալու, դատարանում վարույթի կողմերի նստելու տեղերը փոխելու կամ անհրաժեշտության դեպքում կատարողին դատական նիստերի դահլիճից հեռացնելու միջոցով»[25]:

Մեղադրյալները երբեմն վիրավորական արտահայտություններ են թույլ տալիս տուժողի հասցեին դատական նիստի ընդմիջման ժամանակ, երբ դատավորը ներկա չի լինում նիստերի դահլիճում: Օրինակ՝ ԵԴ/0367/01/18 գործով 2021 թվականի նոյեմբերի 4-ի նիստի ընդմիջման ընթացքում մեղադրյալը, դիմելով տուժողին, ասել է. «Ոնց որ թե շատ ուրախ ես, հա՞», «Էդքան սաբրազիտ չես արել, հա՞»: Դատական նիստերի ընդմիջումների ընթացքում տուժողի և մեղադրյալի շփումը բացառելու ուղղությամբ դատարանը որևէ գործողություն չի ձեռնարկում: Բռնության ենթարկված կինն ու բռնարարը եղել են նույն սենյակում երկար ժամանակ, այդ ընթացքում չեն բացառվում ինչպես վիրավորական արտահայտությունները, այնպես էլ ֆիզիկական հարձակումները: Մշտադիտարկված գործերով, սակայն, ֆիզիկական հարձակումների դեպքեր չեն արձանագրվել:

Հարցազրույցի մասնակից կանանցից շատերը նշել են, որ

25 Նույն տեղում, էջ 34:

անապահով են իրենց զգում ինչպես դատական նիստի, ընդմիջումների ժամանակ, այնպես էլ նիստերից առաջ և հետո: Իսկ որոշ դատարանների շենքային պայմանները թույլ չեն տալիս անգամ բավարար հեռավորություն պահպանել տուժողի և մեղադրյալի միջև: Օրինակ՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Արմավիր նստավայրի նիստերի դահլիճներից մեկը մոտ 30 քառակուսի մետր է, իսկ մեղադրյալի և տուժողի միջև հեռավորությունը՝ մոտ 4 մետր: Այդ դահլիճում անգամ բավարար նստատեղեր ապահովված չեն դատավարության մասնակիցների համար, ինչի պատճառով ԱՐԴ/0170/01/21 գործով 2021 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի մեկնարկին դատական կարգադրիչը տուժողի ներկայացուցչին առաջարկել է նստել մեղադրյալի կողքին, քանի որ տուժողի կողքին պետք է նստեր մեղադրող դատախազը, իսկ երրորդ նստատեղ այդ կողմում պարզապես չի եղել: Սա անընդունելի է, քանի որ տուժողի ներկայացուցիչը դատարանում պետք է պաշտպանի տուժողի իրավունքները, և դատական նիստի ընթացքում հաճախ տեղում խորհրդակցելու անհրաժեշտություն է առաջանում, ուստի տուժողի ներկայացուցիչը միշտ պետք է նստի նրա կողքին:

2.2. Ընտանեկան բռնության վերաբերյալ դատական ակտերի ուսումնասիրություն

Ընտանեկան բռնության գործերով քրեական պատասխանատվության կիրառման առանձնահատկությունները, ընտանեկան բռնության դեպքերով քրեական հետապնդման միտումներն ու ձևավորված դատական պրակտիկան վերլուծելու նպատակով ուսումնասիրվել են 2018-2022 թվականներին կայացված 35 դատական ակտեր, որոնցից 25-ը՝ ըստ էության դատական ակտեր, 10-ը՝ դատաքննության փուլում կարճված գործերով ակտեր:

2.2.1. Ընտանեկան բռնության վերաբերյալ ըստ էության դատական ակտերի ուսումնասիրություն

2018-2022 թվականներին ՀՀ դատարանների կողմից ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերով ընդունված ըստ էության դատական ակտերի՝ datalex.am որոնողական

համակարգի միջոցով կատարված ընտրանքի արդյունքում ընտրվել է 25 դատական ակտ: Ընտրանքային դատական ակտերն են՝ ԱՐԴ/0078/01/18, ԵԱԴԴ/0099/01/17, ԱՐԴ/0021/01/19, ԱՐԴ1/0001/01/19, ԱՐԴ/0050/01/19, ԵԴ/0299/01/19, ԱՎԴ/0015/01/19, ԳԴ3/0033/01/18, ԱՐԴ/0166/01/19, ՇԴ/0074/01/19, ԼԴ/0113/01/19, ԿԴ1/0040/01/19, ԱՎԴ2/0038/01/20, ԵԴ/0041/01/20, ԱՎԴ2/0055/01/21, ՇԴ/0147/01/21, ԱՎԴ/0018/01/21, ԿԴ/0007/01/20, ԱՎԴ4/0014/01/18, ԱՎԴ/0066/01/19, ԱՐԴ/0210/01/21, ԱՐԴ/0020/01/21, ՇԴ/0217/01/21, ԱՎԴ2/0010/01/22, ՍԴ/0046/01/22:

Ընտրված 25 դատական ակտերից 2-ը կայացվել է 2018 թվականին, 6-ը՝ 2019-ին, 4-ը՝ 2020-ին, 10-ը՝ 2021-ին, և 3-ը՝ 2022-ի առաջին կեսին:



Դատական ակտերի ընտրանքն ընդգրկել է Երևանի և 7 մարզային դատարանների կողմից ընտանեկան բռնության գործերով կայացված ըստ էության դատական ակտերը: Ըստ այդմ՝ Երևանի և մարզային դատարանների միջև դատական ակտերի քանակական բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.

հհ	Դատարան	Դատական ակտերի քանակ
1	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	3
2	Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան	7
3	Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան	7
4	Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան	3
5	Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1
6	Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	2
7	Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1
8	Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	1

Դատական ակտերի ընտրությունը ըստ կատարված հանցագործության ծանրության կատարվել է հաշվի առնելով ընտանեկան բռնության գործերով առավել տարածված քրեական որակումները: Մասնավորապես, ընտրանքային դատական ակտերը կայացվել են ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով.

- սպանություն (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված),
- ինքնասպանության հասցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդված),
- դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված),
- դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդված),
- ծեծ (ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված),
- ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդված),
- սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված):

Մեղադրական և արդարացման դատավճիռները

Ընտրված 25 քրեական գործերով կայացված դատավճիռներից 23-ի դեպքում առաջին ատյանի դատարանը ամբաստանյալին ճանաչել է մեղավոր հանցագործության կատարման համար: Մեկ դատական ակտով առաջին ատյանի դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ այն պատճառաբանությամբ, որ մեղադրանքի հիմքում դրված ապացույցները բավարար չեն, չեն կարող իրենց թույլատրելիության, վերաբերելիության և բավարարության առումով հիմք լինել մեղադրող դատավճիռ կայացնելու համար, և դատարանը որոշել է քրեական հետապնդումը դադարեցնել և ամբաստանյալին արդարացնել արարքներում նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով: Դատավճռի դեմ դատախազը վերաքննիչ բողոք է ներկայացրել վերաքննիչ քրեական դատարան, այն հիմքով, որ կայացված որոշումը հիմնավոր և օրինական չէ, ապացույցները բավարար են մեղքը ապացուցելու համար: Վերաքննիչ քրեական դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի կայացրած ակտը, ամբաստանյալին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական

օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 8 տարի ժամկետով:

Մեկ դատական ակտով դատարանը ազատել է ամբաստանյալին քրեական պատասխանատվությունից ու պատժից՝ հիմք ընդունելով այն, որ նա ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (սպանություն) և 118-րդ հոդվածով (ծեծ) նախատեսված քրեական օրենքով չթույլատրված արարքները կատարել է անմեղսունակության վիճակում, և որոշում է կայացվել նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրական միջոց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հատուկ տիպի հսկողության հոգեբուժական բաժանմունքում՝ հարկադիր բուժում ստանալու համար:

Դատարանների կողմից ընտրված պատիժների տեսակները

Ընտրված 25 քրեական գործերով կայացված դատավճիռներն ուսումնասիրվել են նաև ըստ ընտրված պատժի տեսակի: Ըստ այդմ՝ 10 դատական ակտով նշանակվել է ազատազրկում, 14-ով նշանակվել է տուգանք, իսկ 1-ի դեպքում կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց:



Ընդ որում՝ դատարանի կողմից նշանակված պատիժների փաստացի կրման առումով առկա է հետևյալ պատկերը: 25 դատական ակտերով նշանակված պատիժներից 5-ի դեպքում կիրառվել է համաներում, և ամբաստանյալները ազատվել են պատժի կրումից, իսկ 3 դատական ակտերով դատարանը որոշել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան 1 տարի ժամկետով՝ 2 դատավճռով, և 2 տարի ժամկետով՝ 1 դատավճռով: Ըստ էության՝ 25 քրեական գործերից 8-ի դեպքում ամբաստանյալները փաստացի ազատվել են պատիժը կրելուց: Ընդ որում՝ այդ 8 քրեական գործերից 7-ի դեպքում դատարանը նշանակել է ազատազրկման հետ կապված պատիժ: Ստացվում է, որ ուսումնասիրված 10 դատական ակտերով նշանակված «ազատազրկում» պատիժը ամբաստանյալները փաստացի կրել են միայն 3 քրեական գործով: Այլ կերպ ասած՝ քրեական գործերի ճնշող մեծամասնությունում ազատազրկման հետ կապված դատական ակտերը փաստացի պատասխանատվության չեն հանգեցրել բռնարարների համար:

Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները

Դատարանը պատժի տեսակը և չափը որոշում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: Այս տեսանկյունից առանձին ուսումնասիրության առարկա են դարձել ընտանեկան բռնության գործերով ամբաստանյալների պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որոնք դատարանները հիմք են ընդունել պատժաչափ սահմանելիս:

Ընտրանքային դատական ակտերում դատարանները պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող են համարել հետևյալ հանգամանքները.

1. կատարածի համար զղջալը,
2. մեղքը ընդունելը,
3. խնամքին մինչև 14 տարեկան երեխաների առկայությունը,
4. ֆիզիկապես վատառողջ լինելը,
5. խնամքին թոշակառու ծնողների առկայությունը,
6. խոստովանական ցուցմունքներ տալը,
7. ինքնակամ ոստիկանության բաժին ներկայանալը,
8. տուժողի չբողոքելը,
9. տուժողի կողմից քաղաքացիական հայցի պահանջ չներկայացնելը,
10. նախկինում դատված չլինելը,
11. կին լինելը,
12. հանցագործությունը բացահայտելուն աջակցելը,
13. տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը,
14. ամբաստանյալի ակտիվ մասնակցությունն իր անչափահաս երեխաների դաստիարակության գործում, նրանց ֆինանսապես օգնելը, երեխաների հաճախակի այցելությունները ամբաստանյալի բնակարան և այնտեղ գիշերելը,
15. հաշմանդամություն ունենալը:

Ընտրանքային դատական ակտերում դատարանները պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող են համարել ընդամենը երկու հանգամանք՝

1. հանցանքը ալկոհոլի ազդեցության տակ կատարելը,
2. հանցագործությունների ռեցիդիվը:

Հարկ է նշել, որ ուսումնասիրված 25 քրեական գործերից 13-ի դեպքում դատարանը արձանագրել է ամբաստանյալի պատիժը

և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայություն: ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով համապատասխանաբար սահմանված են պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Մեղմացնող հանգամանքների ցանկը սպառիչ չէ, և դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ: Մինչդեռ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկը սպառիչ է, և դատարանը չի կարող հաշվի առնել ՀՀ քրեական օրենսգրքով չնախատեսված հանգամանքներ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկում առկա չէ այնպիսի հանգամանք, որը բնորոշ է ընտանեկան բռնության գործերին և կարող է կիրառվել որպես ծանրացնող հանգամանք: Ձուգահեռաբար համեմատելով ծանրացնող հանգամանքների ցանկը նոր քրեական օրենսգրքի նույնական դրույթների հետ՝ հարկ է նշել, որ թեև ծանրացնող հանգամանքների ցանկում տեղ չի գտել ընտանիքի անդամի (ազգականի) կողմից հանցագործությունը կատարելը որպես առանձին ծանրացնող հանգամանք, սակայն անձի կյանքի և առողջության, ինչպես նաև ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված մի շարք հանցագործությունների առումով համապատասխան հոդվածներում մերձավոր ազգականի կողմից հանցանքը կատարելը համարվել է հանցագործությունն ավելի որակյալ դարձնող հիմք, որի դեպքում սահմանված է ավելի խիստ պատիժ: Մասնավորապես, այդպիսի հոդվածների շարքին են դասվում սպանությունը (155-րդ հոդված), ինքնասպանության հասցնելը (162-րդ հոդված), առողջությանը ծանր վնաս պատճառելը (166-րդ հոդված), առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը (167-րդ հոդված), առողջությանը թեթև վնաս պատճառելը (171-րդ հոդված), հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը (176-րդ հոդված), հոգեկան ներգործությունը (194-րդ հոդված),

ֆիզիկական ներգործությունը (195-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (198-րդ հոդված), սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը (199-րդ հոդված) և այլն[26]: Նման իրավակարգավորումները կարևոր առաջընթաց են համարվում ընտանեկան բռնության գործերով կատարված արարքը քրեաիրավական որակելու և դրան համարժեք պատիժ սահմանելու համար: Սակայն հարկ է նշել, որ ընտանեկան բռնությանը բնորոշ, սակայն հաճախ դժվար բացահայտվող հանցագործություններից մեկով՝ ինքնասպանության հակելու հոդվածով մերձավոր ազգականի կողմից հանցանքը կատարելը չի համարվել հանցագործությունն ավելի որակյալ դարձնող հիմք:

Այնուամենայնիվ, ընտանեկան բռնության գործերով մեղմացուցիչ հանգամանքների վերաբերյալ միջազգային չափանիշների և լավագույն փորձի ուսումնասիրման անհրաժեշտություն կա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլ հանցագործությունների դեպքում կիրառելի որոշ մեղմացուցիչ հանգամանքներ իրենց բնույթով վերաբերելի և կիրառելի չեն ընտանեկան բռնության դեպքերով: Օրինակ՝ անչափահաս երեխաներ ունենալու փաստը ընտանեկան բռնության դեպքում հաճախ կիրառվում է որպես մեղմացուցիչ հանգամանք, մինչդեռ այն ավելի շատ ծանրացնող հանգամանք է, քանի որ ընտանեկան բռնությունը հաճախ կատարվում է երեխաների ներկայությամբ, ինչն, ըստ էության, հոգեբանական բռնություն է նրանց նկատմամբ:

Նշանակված պատժաչափի համեմատությունը հանցանքի համար նախատեսված պատժատեսակների հետ

Առանձին դիտարկման առարկա է դարձել այն հարցը, թե դատարանը կոնկրետ հանցանքի համար նախատեսված պատժաչափի համեմատությամբ ինչ պատիժ է ընտրել՝ առավել մեղմը, թե առավել խիստը: Այս առումով համադրվել են ուսումնասիրված դատական ակտերով նշանակված պատիժները և կոնկրետ արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատիժները: Ստորև ներկայացված աղյուսակում առավել տեսանելի ներկայացված է նշված համադրումը:

26 Մանրամասները՝ Հավելված 3-ում:

ՀՀ	ՀՀ քրեական օրենսգրքի հոդված	Տվյալ հոդվածով նախատեսված պատիժ	Դատարանի կողմից նշանակված պատիժ
1	Հոդված 112, Մաս 1	Ազատազրկում՝ երեքից յոթ տարի ժամկետով	Չորս տարի ժամկետով ազատազրկում
2	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Երեք դրվագից յուրաքանչյուրով՝ 60.000 ՀՀ դրամի չափով տուգանք, համակցությամբ տուգանք՝ 150.000 ՀՀ դրամի չափով
3	Հոդված 104, Մաս 1 Հոդված 118	Ազատազրկում՝ ութից տասնհինգ տարի ժամկետով Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Ազատազրկում՝ 8 տարի ժամկետով Արդարացվել է՝ արարքում նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով
4	Հոդված 112, Մաս 1	Ազատազրկում՝ երեքից յոթ տարի ժամկետով	Ազատազրկում՝ երեք տարի վեց ամիս ժամկետով
5	Հոդված 112, Մաս 1	Ազատազրկում՝ երեքից յոթ տարի ժամկետով	Ազատազրկում՝ չորս տարի ժամկետով
6	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք՝ 40.000 ՀՀ դրամի չափով

7	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք՝ 50.000 ՀՀ դրամի չափով
8	Հոդված 117 Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք՝ 50.000 ՀՀ դրամի չափով Տուգանք՝ 40.000 ՀՀ դրամի չափով
9	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք՝ 30.000 ՀՀ դրամի չափով
10	Հոդված 117 Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	1-ին ամբաստանյալ. երեք դրվագներից յուրաքանչյուրով՝ տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով, պատիժների գումարմամբ՝ 200.000 ՀՀ դրամ 2-րդ ամբաստանյալ. երեք դրվագներից յուրաքանչյուրով՝ տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով, պատիժների գումարմամբ՝ 250.000 ՀՀ դրամ

11	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	կարճվել է հաշտության հիմքով
	Հոդված 147, Մաս 1	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Կալանք՝ 1 ամիս ժամկետով
	Հոդված 353.1, Մաս	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով	Երկու դրվագներից յուրաքանչյուրով՝ ազատազրկում երեք ամիս ժամկետով, պատիժների մասնակի գումարմամբ՝ վերջնական պատիժ՝ ազատազրկում հինգ ամիս ժամկետով
12	Հոդված 112, Մաս 1	Ազատազրկում՝ երեքից յոթ տարի ժամկետով	Ազատազրկում՝ երեք տարի ժամկետով
13	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք 50.000 ՀՀ դրամի չափով
14	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք՝ 80.000 ՀՀ դրամի չափով

15	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	տուգանք՝ 60.000 ՀՀ դրամի չափով
16	Հոդված 118 Հոդված 104, Մաս 1 Հոդված, 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով Ազատազրկում՝ ութից տասնհինգ տարի ժամկետով Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք՝ 70.000 ՀՀ դրամի չափով Կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց՝ հանցանքները անմեղսունակության վիճակում կատարելու հիմքով
17	Հոդված 104, Մաս 1 Հոդված, 118	Ազատազրկում՝ ութից տասնհինգ տարի ժամկետով Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց՝ հանցանքները անմեղսունակության վիճակում կատարելու հիմքով
18	Հոդված 110, Մաս 1	Ազատազրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով	Ազատազրկում՝ 3 ամիս ժամկետով
19	Հոդված 110, Մաս 1 Հոդված 119, Մաս 1	Ազատազրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով Ազատազրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով	Ազատազրկում՝ երեք տարի ժամկետով Ազատազրկում՝ երկու տարի ժամկետով Պատիժների մասնակի գումարմամբ՝ վերջնական պատիժ՝ ազատազրկում չորս տարի ժամկետով

20	Հոդված 118 Հոդված 258, Մաս 2	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով	Տուգանք՝ 60.000 ՀՀ դրամի չափով Մեկ տարի երկու ամիս ժամկետով ազատազրկում
21	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Երկու դրվագներից յուրաքանչյուրով՝ տուգանք 70.000 ՀՀ դրամի չափով Պատիժների մասնակի գումարմամբ՝ տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով
22	Հոդված 118 Հոդված 137, Մաս 1	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով	Երկու դրվագներից յուրաքանչյուրով՝ տուգանք 30.000 ՀՀ դրամի չափով Տուգանք՝ 70.000 ՀՀ դրամի չափով Պատիժների գումարմամբ՝ տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով

23	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով
24	Հոդված 118	Տուգանք՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով	Երկու դրվագներից յուրաքանչյուրով՝ տուգանք՝ 80000 ՀՀ դրամի չափով Պատիժների գումարմամբ՝ տուգանք՝ 160000 ՀՀ դրամի չափով
25	Հոդված 104, Մաս 1	Ազատազրկում՝ ութից տասնհինգ տարի ժամկետով	Ազատազրկում՝ տասներեք տարի վեց ամիս ժամկետով

Կատարված համադրման արդյունքում արձանագրվել է հետևյալը. դատարանները ընտանեկան բռնության գործերով պատիժ նշանակելիս ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատժատեսակներից առավել հաճախ ընտրում են ավելի մեղմ պատիժը: Օրինակ՝ ընտանեկան բռնության գործերում ամենից հաճախ հանդիպող ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծը) որակված հանցագործությունների դեպքում ուսումնասիրված ակտերով դատարաններն ընտրել են բացառապես տուգանքը: Կնոջը ծեծելու համար բռնարար տղամարդիկ միջինում տուգանվել են 63880 ՀՀ դրամով, որն ավելի քիչ է, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը:

Տուգանքի չափ սահմանելիս ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված տուգանքի միջակայքի տեսանկյունից դատարաններն ընտրել են ինչպես վերին սահմանաչափին մոտ, այնպես էլ ստորին սահմանաչափին մոտ կամ տվյալ միջակայքի միջին հատվածում գտնվող տուգանքի չափ: Հետևաբար այս առումով որևէ օրինաչափություն չի արձանագրվել: Իսկ միայն ազատազրկում նախատեսող պատժատեսակի դեպքում դատարանները հիմնականում որպես պատիժ նշանակել են ազատազրկման ժամկետի ստորին շեմին մոտ ժամկետով ազատազրկումը:

Հանրային և մասնավոր մեղադրանքը

Ընտրանքային դատավճիռներն ուսումնասիրվել են ըստ ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերի՝ հանրային և մասնավոր մեղադրանքով հարուցվելու հատկանիշի: 1998 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնցով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման[27]: Ըստ վերոնշյալ հատկանիշի՝ դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 25 քրեական գործերից 11-ով քրեական հետապնդումն իրականացվել է հանրային մեղադրանքի հիմքով, իսկ 14-ով՝ մասնավոր մեղադրանքի հիմքով:

Ուսումնասիրված դատական ակտերից որևէ մեկում չեն հայտնաբերվել նախաքննության փուլում հանցագործության վերաորակման մասին տվյալներ:

27 Այդպիսիք են 113-րդ հոդվածի 1-ին մասով, 116-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով, 118-րդ հոդվածով, 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 121-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 124-րդ հոդվածի 1-ին մասով, 128-րդ հոդվածի 1-ին մասով, 137-րդ հոդվածի 1-ին մասով, 137.1-ին հոդվածի 1-ին մասով, 158-րդ հոդվածի 1-ին մասով, 174-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 1-ին մասով, 114-րդ հոդվածի 1-ին մասով, 115-րդ հոդվածի 1-ին մասով, 181-րդ հոդվածի 1-ին մասով, 183-րդ հոդվածի 1-ին մասով, 184-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 197-րդ հոդվածով, 213-րդ հոդվածի 1-ին մասով, 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունները:

Դատական գործերի քննության ժամկետները

Դատական գործերի քննության ժամկետը առանձին հետազոտման առարկա է եղել: Ըստ այդմ՝ ուսումնասիրվել է յուրաքանչյուր գործի ստացման և վերջնական դատական ակտի կայացման միջակայքը՝ հիմք ընդունելով գործի ստացման օրը և առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճռի ամսաթիվը: Ըստ այդմ՝ առկա է հետևյալ պատկերը.

ՀՀ	Դատական գործի տվյալ	Գործի քննության ժամկետ
1	ԱՐԴ/0078/01/18	3 ամիս
2	ԵԱԴԴ/0099/01/17	8 ամիս
3	ԱՐԴ/0021/01/19	9 ամիս
4	ԱՐԴ1/0001/01/19	1 ամիս, արագացված դատաքննություն
5	ԱՐԴ/0050/01/19	2 ամիս, արագացված դատաքննություն
6	ԵԴ/0299/01/19	4 ամիս
7	ԱՎԴ/0015/01/19	2 ամիս, արագացված դատաքննություն
8	ԳԴ3/0033/01/18	5 ամիս
9	ԱՐԴ/0166/01/19	6 ամիս
10	ՇԴ/0074/01/19	9 ամիս
11	ԼԴ/0113/01/19	9 ամիս
12	ԿԴ1/0040/01/19	5 ամիս
13	ԱՎԴ2/0038/01/20	6 ամիս, արագացված դատաքննություն
14	ԵԴ/0041/01/20	4 ամիս

15	ԱՎԴ2/0055/01/21	4 ամիս
16	ՇԴ/0147/01/21	3 ամիս, կիրառվել է համաձայնեցման վարույթ
17	ԱՎԴ/0018/01/21	2 ամիս, արագացված դատաքննություն
18	ԿԴ/0007/01/20	1 տարի 3 ամիս
19	ԱՎԴ4/0014/01/18	2 տարի 1 ամիս
20	ԱՎԴ/0066/01/19	1 տարի 7 ամիս
21	ԱՐԴ/0210/01/21	2 ամիս
22	ԱՐԴ0020-01-21	4 ամիս
23	ՇԴ/0217/01/21	2 ամիս, կիրառվել է համաձայնեցման վարույթ
24	ԱՎԴ2/0010/01/22	2 ամիս
25	ՍԴ/0046/01/22	1 ամիս

Քրեական գործերի քննության ժամկետների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք քննվել են տարբեր ժամկետներում, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես գործերի բարդությամբ ու բազմադրվագությամբ, այնպես էլ այլ գործոններով: 25 քրեական գործերից 5-ի դեպքում կիրառվել է արագացված դատաքննություն, իսկ 2-ի դեպքում՝ համաձայնեցման վարույթ: Դատական նիստերի քանակը, դրանց կայացած լինելու և հետաձգված լինելու հանգամանքներն առանձին ուսումնասիրության են ենթարկվել: Տարբեր քրեական գործերով դատական նիստերի հետաձգման պատճառներ են եղել՝

1. ամբաստանյալի[28] և պաշտպանի չներկայանալը,
2. տուժողի և վկաների չներկայանալը,

28 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հին տարբերակում ամբաստանյալ էր կոչվում մեղադրյալը, որի վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության: Ներկայումս գործող օրենսգրքում գործածվում է միայն «մեղադրյալ» եզրույթը:

3. դատական կազմի փոփոխությունը գործուղման հիմքով,
4. գործի նյութերին ծանոթանալը ներգրավված մեղադրողի կողմից,
5. պաշտպանի միջնորդությունը նիստի հետաձգման վերաբերյալ և այլն:

Միջազգային իրավունքի կիրառումը դատարանների կողմից

Դատարանների կայացրած դատական ակտերում միջազգային իրավունքի ուղղակի կիրառում դիտարկվել է 25 դատավճռից երկուսում: Մասնավորապես, հղումներ են կատարվել մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին:

Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին կատարված հղումները վերաբերել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին: Հղումները կատարվել են այս կամ այն իրավունքի՝ տվյալ միջազգային փաստաթղթում ամրագրված լինելու հանգամանքի համատեքստում:

Բովանդակային առումով դատարանների կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կիրառումը վերաբերել է այնպիսի ինստիտուտների, ինչպիսիք են դատարանի կողմից իր որոշումների պատճառաբանումը, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի՝ մեղադրանքի հիմքում դնելու անթույլատրելիությունը, անմեղության կանխավարկածը: Ընտանեկան բռնության վերաբերյալ որևէ միջազգային նորմի կամ մեկնաբանության անմիջական կիրառություն դատարանները չեն արձանագրել:

Ընտանեկան բռնության շղթայի ազդեցությունը հանցանքի որակման վրա

Առանձին ուսումնասիրության առարկա է եղել այն հարցը, թե արդյոք ընտանեկան բռնության նախկին դրվագների առկայությունը, բռնությունների պարբերական բնույթն ազդեցություն ունեցել են հանցագործության որակման վրա: Հարկ է նշել, որ բոլոր դիտարկված ակտերում քրեական գործը հարուցվել է ըստ բռնության դրսևորման կոնկրետ դրվագի: Եթե այդպիսի դրսևորումները եղել են բազմադրվագ, ապա քրեական գործը հարուցվել է յուրաքանչյուր դրվագով, և պատժի նշանակումը ևս կատարվել է յուրաքանչյուր դրվագով:

Հարկ է արձանագրել, որ մի շարք դեպքերում դատական ակտում արձանագրվել կամ ապացուցված են համարվել բռնարարի կողմից տուժողի նկատմամբ կատարված նախկին բռնությունները կամ բռնությունների պարբերական բնույթը: Այնուամենայնիվ, բռնության շղթայի արձանագրումը դատարանի կողմից չի ազդել հանցագործության որակման կամ պատժաչափի նշանակման վրա: Այս տեսանկյունից կարևոր է նաև ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված համապատասխան հիմքերի առկայությունը, որը թույլ կտար դատարանին բռնության շղթան կամ պարբերական բնույթը համարել ծանրացնող հանգամանք: Մինչդեռ հանցագործության պարբերական բնույթը որպես առանձին ծանրացնող հանգամանք ՀՀ քրեական օրենսգիրքը չի դիտարկել, այլ միայն որոշ հանցագործությունների դեպքում (օրինակ՝ սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ, անառակաբարո գործողությունները) սահմանել է որպես հանցագործությունը որակյալ դարձնող հիմք:

Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջը

Ուսումնասիրված 25 դատական ակտերից միայն մեկի դեպքում է տուժողի իրավահաջորդը ներկայացրել հանցագործությամբ

պատճառված նյութական վնասի հատուցման պահանջ: Մասնավորապես, քաղաքացիական հայց է ներկայացվել ընդդեմ ամբաստանյալի՝ 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին՝ որպես տուժողի հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսեր: Դատարանը տուժողի իրավահաջորդի ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարել է մասնակիորեն և որոշել է ամբաստանյալից հօգուտ տուժողի իրավահաջորդի բռնագանձել 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տուժողի հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերի հատուցում: 25 դատական գործերով միայն 2-ի դեպքում է տուժողն ունեցել ներկայացուցիչ:

Պաշտպանական որոշում կայացնելը

Ուսումնասիրված գործերով միայն մեկ դատական գործի դեպքում է կայացված եղել պաշտպանական որոշում: Մասնավորապես, համաձայն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, արգելվել է ընտանիքում բռնություն գործադրած անձին 100 մետրից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին, այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայր, արգելվել է այդտեղ նրա վերադարձը 20 օր ժամկետով, արգելվել է մոտենալ տուժողի երեխային, սահմանափակվել է հեռախոսային, նամակագրական և այլ կապի միջոցներով նրանց անհանգստացնելը: Պաշտպանական որոշումը երկարացնելու միջնորդություն չի ներկայացվել:

Դատական ակտերի բողոքարկումը

Առաջին ատյանի դատարանների կայացրած ընտրանքային 25 դատական ակտերից միայն 3-ի դեպքում է ներկայացվել վերաքննիչ բողոք, որոնցից մեկի դեպքում բողոքը ներկայացրել է մեղադրողը, իսկ երկուսի դեպքում՝ ամբաստանյալները: Վերաքննիչ քրեական դատարանը բոլոր դեպքերում մերժել է վերաքննիչ բողոքները՝ բացառությամբ մեկ գործի, որով մասնակի

է բավարարել բողոքը: Քրեական գործերից մեկով վերաքննիչ քրեական դատարանի ակտի դեմ բերվել է վճռաբեկ բողոք, որը բավարարել է ՀՀ վճռաբեկ դատարանը:

Գենդերային կարծրատիպների վերարտադրումը դատական ակտերում

Առանձին ուսումնասիրության առարկա է եղել դատական ակտերում այնպիսի ձևակերպումների, հարցերի ու պատասխանների առկայությունը, որոնք վերարտադրում են հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային կարծրատիպները և ամրապնդում են գենդերային դերերի վերաբերյալ առկա միֆերը: Մասնավորապես, ԱՎԴ4/0014/01/18 գործով Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած դատավճռում արձանագրվել են դատաքննության ժամանակ կատարված հարցաքննությունները, որոնցում առկա են տուժողին մեղադրելուն, կնոջ անհավատարմությունը կամ անբարոյական կին լինելու հանգամանքը որպես սպանության դրդապատճառ լեգիտիմացնելուն, բռնարարին արդարացնելուն միտված հարցադրումներ և պատասխաններ: Այդպիսիք ուղղակիորեն մեջբերված են ստորև.

> «Հարց – Ինչի՞ համար Տ. *Ն.-ն* պետք է ուզենար սպանել ձեր քրոջը, նրան անհավատարմության մեջ չի կասկածել, ասում եք, որ նա բարոյական կին է եղել: Ուրիշ ի՞նչ պատճառ պետք է ունենար սպանելու ձեր քրոջը»:
>
> «Հարց – Իսկ ինչո՞ւ չէր բաժանվում»:
>
> «Հարց – Ըստ ձեզ՝ կատարվածն ի՞նչ է, ինչի՞ արդյունք է, վերջն ինչի՞ց է մահացել Լ.-*ն*»:
>
> «Պատասխան – Ասեցին ինչ-որ թունաքիմիկատ է խմել: Ինքը ենթադրում է, դա իր կարծիքն է, իրեն թվում է, որ նա շանտաժ է արել, թե բողոք էր մարդկանց դեմ, թե ընտանիքի դեմ, որովհետև ինչքան էլ մարդն անելանելի

վիճակում լինի, *այդ քայլին չպիտի գնա»:*

«Հարց – Շանտաժ է անում, այսինքն՝ ամուսնո՞ւն»:

«Պատասխան – Հավանաբար բոլորին՝ ընտանիքի անդամներին, ոչ իրեն: Նա կյանքը սիրում էր, նա չէր խմում մահանալու համար, նա շատ հպարտանում էր, որ բժշկի մամա է, երևի խմել է, որ վախեցնի»:

Նման խնդիրներ մյուս դատական ակտերում չեն հայտնաբերվել, քանի որ դատաքննության ժամանակ տեղի ունեցած հարցաքննությունների, հարց ու պատասխանի ուղղակի արձանագրումը դատական ակտերի ճնշող մեծամասնությունում պարզապես բացակայում է:

2.2.2. Դատաքննության փուլում ընտանեկան բռնության գործերի կարճման վերաբերյալ դատական ակտերի ուսումնասիրություն

Ընտանեկան բռնության գործերով ըստ էության կայացված դատական ակտերից բացի՝ ուսումնասիրվել են նաև դատաքննության փուլում ընտանեկան բռնության գործերի կարճման վերաբերյալ տասը դատական ակտեր: Այս ակտերի ուսումնասիրությունը նպատակ է հետապնդել վերհանելու քրեական գործերի կարճման հիմքերը և ընդհանուր միտումները:

Դատական քննության փուլում կարճված դատական գործերի հայտնաբերումն ու ընտրանքը կատարվել են www.datalex.am դատական ակտերի որոնողական համակարգի միջոցով: Կարճման վերաբերյալ դատական ակտերի ընտրանք կատարելիս ևս հնարավորինս պահպանվել են աշխարհագրական հավասար բաշխվածության և ըստ տարիների համամասնական բաշխվածության սկզբունքները:

Ըստ այդմ՝ ընտրվել են 2019-2022 թվականների ընթացքում հետևյալ քրեական գործերով կայացված

դատական ակտերը՝ ԱՐԱԴ/0021/01/19, ԱՎԴ2/0067/01/20, ԱՎԴ4/0012/01/19, ՇԴ/0104/01/19, ԼԴ/0113/01/19, ԱՎԴ/0138/01/21, ԵԴ/0658/01/21, ԵԴ/1104/01/19, ԵԴ/0710/01/19, ԵԴ/0638/01/19:

Դատական քննության փուլում քրեական գործերի կարճման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով, որի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1 բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.

4) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.

5) մասնավոր հետապնդման դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.

6) անցել են վաղեմության ժամկետները.

7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.

8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.

9) անձը արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

10) անձը մահացել է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ

գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

13) ընդունվել է համաներման մասին օրենք:

Դատական քննության փուլում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործը կարճելու վերաբերյալ կայացված որոշումների ուսումնասիրության արդյունքներ

Դատաքննության փուլում կարճված ընտանեկան բռնության գործերով ընտրված 10 դատական ակտերից 4-ը կայացրել է Երևան քաղաքի դատարանը, իսկ 6-ը՝ մարզային դատարանները: Ըստ աշխարհագրական բաշխվածության առկա է հետևյալ պատկերը:



Դատաքննության փուլում կարճված ընտանեկան բռնության գործերով ընտրված 10 դատական ակտերից 2-ը կայացվել է 2019 թվականին, 3-ը՝ 2020-ին, 3-ը՝ 2021-ին, 2-ը՝ 2022-ին:



Դատաքննության փուլում կարճված ընտանեկան բռնության գործերը հարուցված են եղել ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով.

1. Հոդված 113, Մաս 1 - Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը:
2. Հոդված 117 - Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը:
3. Հոդված 118 - Ծեծը:
4. Հոդված 119, Մաս 1 - Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը:
5. Հոդված 147, Մաս 1 - Մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելը:

6. Հոդված 353.1, Մաս 1 - Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը:

Ուսումնասիրված դատական ակտերի դիտարկմամբ արձանագրվել է, որ դատաքննության փուլում կարճված 10 գործերից 8-ը հարուցված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (Ծեծը):

Դատաքննության փուլում ընտանեկան բռնության վերաբերյալ ուսումնասիրված դատական գործերը կարճվել են հետևյալ հիմքերով.

- տուժողը հաշտվել է մեղադրյալի հետ,
- անցել են վաղեմության ժամկետները,
- անձի նկատմամբ առկա է նույն մեղադրանքով քրեական հետապնդում, իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում:

Կարճված գործերի 80 %-ը կարճվել է տուժողի և ամբաստանյալի հաշտության հիմքով: Ըստ կարճման հիմքերի ուսումնասիրված դատական ակտերի բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.



Հարկ է նշել, որ տուժողի և մեղադրյալի հաշտությունը դատաքննության փուլում ընտանեկան բռնության գործերի կարճման առավել տարածված հիմքն է:

Տուժողի և ամբաստանյալի հաշտության հիմքով ընտանեկան բռնության գործերով կարճման վերաբերյալ դատական որոշումների դիտարկման արդյունքում արձանագրվել է, որ քրեադատավարական օրենսդրությունը, հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված, առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ: Մասնավոր հետապնդման գործերը կարող են հարուցվել բացառապես տուժողի բողոքի հիման վրա և ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Տուժողի և մեղադրյալի միջև հաշտության հիմքով քրեական գործը կարճելը իրականացվում է միայն մասնավոր մեղադրանքի (տուժող կողմի բողոքի առկայության) դեպքում:

Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի ընդհանուր քանակում զգալի մաս են մասնավոր մեղադրանքի գործերը (ծեծ, դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը և այլն):

ՀՀ վճռաբեկ դատարանը Ա. Բաբայանի գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «[Հ]աշտության կամավոր և փոխադարձ բնույթի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի կարող որոշում կայացնել հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ: Այլ կերպ՝ հաշտությունը երկու կողմերի փոխադարձ կամահայտնությունն է, այն երբեք չի կարող ունենալ միակողմանի բնույթ, և եթե տուժողը ցանկություն է հայտնում հաշտվելու, իսկ հանցանք կատարած անձը դրա դեմ առարկում է կամ հակառակը, ապա հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական հիմքը բացակայում

է: Նույն կերպ հաշտությունը կամավոր և փոխադարձ չի կարող համարվել, հետևաբար այդ հիմքով քրեական գործի վարույթը չի կարող դադարեցվել, եթե հաշտությունը հետևանք է տուժողի նկատմամբ հանցանք կատարած անձի գործադրած ոչ իրավաչափ ներգործության»: Սույն մեկնաբանության կիրառման գնահատումը դատարանի կողմից յուրաքանչյուր կոնկրետ կարճված քրեական գործով առանձին ուսումնասիրության առարկա է: Պետք է նկատի ունենալ, որ ընտանեկան բռնության գործերով մեծ է հավանականությունը, որ տուժողը կարող է հաշտվել մեղադրյալի հետ ճնշման ու սպառնալիքների ներքո, հատկապես երբ մեղադրյալի հետ համատեղ երեխաներ ունի:

2018-ի հունվարի 31-ից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի լրացված 4-րդ մասը, համաձայն որի, անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց, ընտանիքում բռնության հանցագործության դեպքերում դատախազն իրավասու է հարուցելու քրեական գործ, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում: Սա կարևոր կանխարգելիչ լուծում է: Սակայն, ինչպես արձանագրել են դատական ատյանները, «ՀՀ քրեական դատավարության 183-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը կիրառելի է միայն այն մասնավոր մեղադրանքի գործերով, որոնցով քրեական գործը հարուցվել է դատախազի կողմից»[29]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանեկան բռնության գործերով հաշտությունը ամբաստանյալի կողմից տուժողի նկատմամբ ներգործության և ճնշում գործադրելու ռիսկեր է պարունակում, հաշտության կամավոր լինելը և ոչ իրավաչափ ներգործության բացակայությունը դատական քննության փուլում

29 ՇԴ/0104/01/19, ԵԴ/1104/01/19

դատարանի կողմից գնահատման և ստուգման առանձին առարկա են: Դիտարկված դատական ակտերում այդպիսի գնահատման հիմքում են դրվել այնպիսի փաստեր, ինչպիսիք են, օրինակ, տուժողի կողմից ենթադրյալ հանցագործության դեպքի առիթով ոստիկանություն ահազանգելը, դրանից հետո համապատասխան հաղորդում ներկայացնելը, նախաքննության ընթացքում ընդդեմ ամբաստանյալի ցուցմունքներ տալը, որոնք, ըստ դատարանի, վկայում են, որ տուժողները հաշտվելու պահին անօգնական վիճակում կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ չեն[30]: Մինչդեռ տուժողի կողմից դիմում ներկայացնելը, ամբաստանյալի դեմ նախաքննության ընթացքում ցուցմունք տալը ուղղակիորեն չեն կարող վկայել տուժողի և ամբաստանյալի հաշտության կամավորության և ամբաստանյալի՝ տուժողի վրա ոչ իրավաչափ ներգործության բացակայության մասին:

Հարկ է ընդգծել, որ վերոշարադրյալ վերլուծությունը հիմնված է մինչև նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ուժի մեջ մտնելը գործող կարգավորումների և դրանց հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայի վրա: 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով՝ ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով»: Սույն կարգավորմամբ ընտանեկան բռնության գործերն այսուհետ համարվում են հանրային մեղադրանքի հիման վրա հարուցվող քրեական գործեր, հետևաբար հաշտության հիմքով ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերն այլևս չեն կարող կարճվել:

Առանձին ուսումնասիրման առարկա կարող է լինել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով ընտանեկան բռնության գործերի կարճման պրակտիկան, որին անդրադարձել ենք դատական

30 ՇԴ/0104/01/19:

նիստերի մշտադիտարկման արդյունքների ամփոփման ժամանակ: Ուսումնասիրված ակտերից վաղեմության ժամկետն անցնելու հիմքով կարճված գործերից 2-ի դեպքում դատախազը բողոքարկել է կարճման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը: ԱՐԱԴ/0021/01/19 դատական գործով առաջին ատյանի դատարանի որոշումը քրեական գործը կարճելու վերաբերյալ բողոքարկել է ինչպես դատախազը, այնպես էլ տուժողը: Վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: ԼԴ/0113/01/19 դատական գործով առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկել է դատախազը, և վերաքննիչ բողոքը մերժվել է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց և փաստաբան Զարուհի Մեջլումյանի հետ խորքային հարցազրույցները, ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկումն ու դատական ակտերը փաստում են, որ Հայաստանում բռնության ենթարկված կանանց համար արդարադատության մատչելիությունը լի է բազմաթիվ խոչընդոտներով ու խնդիրներով: Կանայք մեծ մասամբ չեն ստանում բավարար աջակցություն և պաշտպանություն իրավապահ մարմինների կողմից բռնության մասին բողոք ներկայացնելու, ինչպես նաև հետագա փուլերում: Ավելին՝ բռնության ենթարկված կանայք հաճախ իրենց անվտանգ չեն զգում ոստիկանության բաժիններում, իսկ երբեմն ստիպված են լինում պաշտպանվել անգամ ոստիկանության ներկայացուցիչներից, որոնք ի պաշտոնե պետք է երաշխավորեն բռնության ենթարկված անձի պաշտպանությունը: Առավել դժվար է այն կանանց համար, որոնք մինչդատավարական փուլում և/կամ դրանից հետո չեն ստանում իրավաբանական աջակցություն:

Ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործերի մեծ մասը հարուցվել է մասնավոր մեղադրանքի հիման վրա, և քրեական գործի հարուցումը կամ դրա հետագա ընթացքը կախված է եղել կնոջ բողոքի առկայությունից: Այսպիսի իրավիճակներում մեծ է եղել բռնարարի և նրա մերձավոր ազգականների կողմից կնոջ նկատմամբ ճնշումներ գործադրելու հավանականությունը: Հավանաբար հենց սրանով է պայմանավորված նաև այն փաստը, որ դատաքննության փուլում բազմաթիվ են եղել հաշտության հիմքով կարճված՝ մասնավոր մեղադրանքի հիման վրա հարուցված քրեական գործերը: 2022 թվականին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով փորձ է արվում լուծելու այս խնդիրը, մասնավորապես ընտանեկան բռնության գործերն այլևս համարվում են հանրային մեղադրանքի հիման վրա հարուցվող քրեական գործեր, հետևաբար հաշտության հիմքով ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերն այլևս չեն կարող կարճվել:

Ընտանեկան բռնության գործերով հազվադեպ է կիրառվել պաշտպանական որոշում, իրավապահները պատշաճ ջանասիրություն չեն ցուցաբերել կնոջը բռնության կրկնությունից պաշտպանելու ուղղությամբ: Իսկ բռնարարների նկատմամբ հիմնականում կիրառվել են մեղմ, ազատազրկման հետ կապ չունեցող պատիժներ: Ուսումնասիրված ակտերը և մշտադիտարկված գործերը փաստում են, որ ընտանեկան բռնության գործերով դատարաններն ընտրում են առավել մեղմ պատիժներ: Ոչ մեծ ծանրության հանցանքների դեպքում համատարած են տուգանքները, որոնք չեն կարող բավարար զսպող դեր ունենալ բռնության կրկնությունից խուսափելու համար: Պատիժ սահմանելիս դատարանները գործերի մեծ մասում արձանագրել են ծանրացնող հանգամանքի բացակայություն, քանի որ ընտանեկան բռնության համատեքստում որևէ ծանրացնող հանգամանք սահմանված չէ ուսումնասիրված դատական ակտերի ընդունման ժամանակ գործող իրավակարգավորումներով: Նոր քրեական օրենսգրքում ևս ծանրացնող հանգամանքների ցանկում տեղ չի գտել ընտանիքի անդամի (ազգականի) կողմից հանցագործությունը կատարելը որպես առանձին ծանրացնող հանգամանք, սակայն ընտանեկան բռնության գործերին առնչվող մի շարք հոդվածներում մերձավոր ազգականի կողմից հանցանքը կատարելը համարվել է հանցագործությունն ավելի որակյալ դարձնող հիմք, որի դեպքում սահմանված է ավելի խիստ պատիժ:

Ձևավորվել է ընտանեկան բռնության դեպքերով հանցագործության բազմադրվագ որակման և, դրանով պայմանավորված, առանձին դրվագներով պատիժ նշանակելու իրավակիրառ պրակտիկա: Ընտանեկան բռնության շղթան և պարբերական բնույթի նախկին բռնությունները հանցագործության որակման կամ պատժի նշանակման վրա ազդեցություն չեն ունենում: Ազատազրկման հետ կապված պատժատեսակ ընտրելիս դատարանները հիմնականում սահմանում են նախատեսված պատժատեսակի նվազագույն շեմին մոտ պատժաչափ: Դատական ակտերում դատարանների կողմից ընտանեկան բռնության վերաբերյալ և ընտանեկան բռնությանը ներհատուկ միջազգային նորմերի և նախադեպային իրավունքի ուղղակի կիրառում չի արձանագրվել: Ընտանեկան բռնության

դեպքերի ճնշող մեծամասնությունում չեն ներկայացվում հանցագործությամբ պատճառված վնասի, այդ թվում բուժման ծախսերի փոխհատուցման պահանջներ: Սա հաճախ կատարվում է տուժողի՝ իր իրավունքները լիարժեքորեն պաշտպանելու անկարողության պատճառով: Առողջության հետ կապված ծախսերը հիմնականում չեն փաստաթղթավորվում տուժողի կողմից, հատկապես եթե նա չի ստանում իրավաբանական աջակցություն:

Ինչպես դատական նիստերի ընթացքում, այնպես էլ դատական ակտերում արձանագրվել են դատավարության մասնակիցների կողմից տրված հարցեր, հնչեցված արտահայտություններ, որոնք վերարտադրում են հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերը և ամրապնդում են գենդերային դերերի վերաբերյալ առկա միֆերը: Մասնավորապես, դրանցում առկա են տուժողին մեղադրելուն, կնոջ անհավատարմությունը կամ անբարոյական կին լինելու հանգամանքը որպես նրա նկատմամբ կիրառված բռնության դրդապատճառ լեգիտիմացնելուն, բռնարարին արդարացնելուն ուղղված միտումներ:

Բռնարարներին պատասխանատվության ենթարկելու գլխավոր խոչընդոտը դատական համակարգի ծանրաբեռնվածությունն է, որի հետևանքով գործընթացն այնքան է ձգձգվում, որ բազմաթիվ գործեր կարճվում են վաղեմության ժամկետը լրանալու հիմքով: Ու թեև նոր քրեական օրենսգրքով ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում վաղեմության ժամկետը սահմանվել է ոչ թե 2, ինչպես նախկինում էր, այլ 5 տարի, այնուամենայնիվ, երկարատև նախաքննությունն ու դատաքննությունը ոչ միայն հանգեցնում են ուշացած (մերժված) արդարադատությանը, այլև լի են կնոջ նկատմամբ բռնության կրկնության վտանգներով: Գործերի մեծամասնության դեպքում մեղադրյալը կալանավորված չէ, և չկա պաշտպանական որոշում, որը կարգելի նրան մոտենալ կնոջը: Բռնության ենթարկված կանայք իրենց հաճախ անվտանգ չեն զգում դատարանների շենքերում կամ դրա մոտակայքում, որտեղ նրանք կարող են հանդիպել բռնարարին յուրաքանչյուր դատական նիստի ներկայանալիս, երբ վերջիններս կալանքի տակ

չեն: Դատարանների շենքերում նախատեսված չեն առանձնացված սպասասրահներ դատավարության մասնակիցների համար: Կողմերը սովորաբար դատական նիստի մեկնարկին սպասում են դատարանի միջանցքում, իսկ նիստերը միջինում ավելի քան 13 րոպե ուշացումով են սկսվում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում պաշտպանված չէ բռնության ենթարկված կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքը: Այդ իրավունքի լիարժեք պաշտպանության համար անհրաժեշտ են համակարգային շոշափելի փոփոխություններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Կառավարությանը, ոստիկանությանը, քննչական կոմիտեին, գլխավոր դատախազությանը

1. Ընտանեկան բռնության վերաբերյալ ահազանգ ստանալիս, նյութերի նախապատրաստման փուլում և նախաքննության ընթացքում դրսևորել պատշաճ ջանասիրություն կնոջը և նրա երեխաներին բռնությունից պաշտպանելու, անհրաժեշտության դեպքում նրանց ապաստարան տեղափոխելու, բռնարարին ժամանակավորապես մեկուսացնելու ուղղությամբ:

2. Ընտանեկան բռնության մասին ահազանգող անձին անմիջապես բացատրել իր իրավունքները, տրամադրել իր մարզում/համայնքում գործող աջակցման կենտրոն(ներ)ի տվյալները, իրազեկել վերջիններիս կողմից անվճար իրավաբանական օգնություն ստանալու, ապաստարան տեղափոխվելու և այնտեղ ժամանակավորապես բնակվելու նրանց հնարավորությունների մասին: Իրականացնել բռնության կրկնության վտանգի գնահատում և այն բարձր գնահատելու դեպքում գործուն միջամտություն ունենալ դա կանխելու նպատակով:

3. Ստեղծել համապատասխան շենքային/սենյակային պայմաններ, որտեղ բռնության ենթարկված կնոջ հարցաքննությունը տեղի կունենա անվտանգ, ապահով և կոնֆիդենցիալ միջավայրում, չի ուղեկցվի տվյալ ստորաբաժանման տարբեր աշխատակիցների ներկայությամբ կամ ելումուտով:

4. Բռնության ենթարկված կնոջը հնարավորինս շուտ տալ տուժողի կարգավիճակ, բացատրել նրան տուժողի իրավունքները, խրախուսել և աջակցել նրան՝ դիմելու աջակցման կենտրոններ, որոնք մասնագիտացած են ընտանեկան բռնության գործերով:

5. Բոլոր անհրաժեշտ դեպքերում ապահովել բռնության

ենթարկված կնոջ հարցաքննությունները (հատկապես բռնարարի կամ նրա հարազատի հետ առերես հարցաքննությունները) տեսակապի միջոցով: Իսկ առանձին հարցաքննությունների համար բռնության ենթարկված անձին և բռնարարին տարբեր օրերի հրավիրել ոստիկանական բաժանմունք:

6. Հարցաքննությունների ներկայանալու ընթացքում բռնության և ճնշումների կրկնությունը կանխելու նպատակով երաշխավորել բռնության ենթարկված կնոջ անվտանգ տեղաշարժը ինչպես համապատասխան ստորաբաժանում ներկայանալիս, այնպես էլ այնտեղից հեռանալիս: Բռնարարի կամ նրա հարազատների հետ առերես հարցաքննություններ անցկացնելու դեպքում թույլ տալ, որ նախ հեռանա կինը և որոշ ժամանակ անց միայն բռնարարը կամ նրա հարազատները:

7. Բռնարարի հետ առերես հարցաքննությունների ժամանակ ուշադրություն դարձնել կնոջ նկատմամբ նրա վերաբերմունքին, սա ներառում է ոչ միայն գործողություններն ու խոսքը, այլև կնոջ վրա նետած հայացքը: Բացառել հարցաքննությունների ժամանակ տուժողի անձը ստորացնելու, նրան ահաբեկելու, շանտաժի ենթարկելու փորձերը:

8. Բռնության ենթարկված կնոջից բացատրություն/ցուցմունք վերցնելիս խրախուսել նրան ներկայացնելու բռնության ամբողջական պատկերը՝ այն դիտարկելով ընտանեկան բռնության համատեքստում, որը սովորաբար երկարատև և կրկնվող երևույթ է, արձանագրել դա և հնարավոր դեպքերում տալ իրավական գնահատական ոչ թե բռնության մեկ դրվագին, այլ բռնության ամբողջ շղթային:

9. Պարբերաբար վերապատրաստել իրավապահ մարմինների բոլոր օղակների անձնակազմերին, որոնք առնչվում են ընտանեկան բռնության հայտնաբերման, կանխարգելման, նյութերի նախապատրաստման, նախաքննությունը վարելու և վերահսկելու հետ:

10. Իրավապահ մարմինների՝ ընտանեկան բռնության գործերով

իրենց պարտականություններում թերանալու, լիազորությունները գերազանցելու, բռնության ենթարկված կանանց իրավունքները խախտելու, նրանց նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ ահազանգերը քննել պատշաճ ջանասիրությամբ և անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու դեպքում սահմանել խստագույն պատիժներ (անհրաժեշտության դեպքում նաև քրեական հետապնդման): Այսպիսի ահազանգերի վերաբերյալ քննությունն ու դրան հաջորդած հետագա գործողություններն իրականացնել հնարավորինս հրապարակային:

ՀՀ բարձրագույն դատական խորհրդին, դատարանների նախագահներին, դատավորներին

1. Քննարկել ընտանեկան բռնություններ քննող մասնագիտացված դատարանների և/կամ դատարանում գործող մասնագիտացված բաժիններ ստեղծելու հնարավորությունը, օրենսդրական փոփոխության նպատակով համագործակցել ՀՀ Կառավարության և Ազգային ժողովի հետ:

2. Ընտանեկան բռնության գործերը քննել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ բացառելով դատաքննության անհարկի ձգձումները, կողմերի՝ ոչ հարգելի պատճառներով բացակայությունները: Սահմանել ընտանեկան բռնության գործերի քննության համար հնարավորինս սեղմ ժամկետներ (առավելագույնը՝ 2 ամիս): Քայլեր ձեռնարկել, որպեսզի դատական նիստը սկսվի ճիշտ ժամանակին, և հնարավորինս արդյունավետ օգտագործվի տվյալ նիստի համար նախատեսված ժամանակը: Նիստի չկայանալու մասին տեղեկություն ստանալուն պես անմիջապես իրազեկել այդ մասին տուժողին և նրա ներկայացուցչին:

3. Դատարանների համար սահմանել ընտանեկան բռնության գործերի քննության ընթացակարգային կանոններ, ներդնել մեխանիզմներ, որոնք թույլ կտան ապահովել բռնության ենթարկված կնոջ անվտանգությունը դատարան ներկայանալիս, դատարանի շենքում գտնվելիս, նիստին մասնակցելիս, դատարանի շենքից հեռանալիս: Օրինակ՝ սահմանել ընտանեկան բռնության

գործերով դատավարության կողմերի համար դատարանի շենքը լքելու հաջորդականություն: Նախ թույլ տալ, որ կինը հեռանա, ապա որոշ ժամանակ անց՝ մեղադրյալը, եթե վերջինս կալանավորված չէ:

4. Դատական նիստերի ընդմիջումների ժամանակ ապահովել, որ տուժողը և մեղադրյալը չգտնվեն միևնույն տարածքում: Օրինակ՝ մեղադրյալը կարող է սպասել նիստերի դահլիճից դուրս, իսկ տուժողը՝ ներսում:

5. Դատարաններում ստեղծել առանձին սպասասրահներ ընտանեկան բռնության գործերով դատավարության կողմերի համար:

6. Պարբերաբար վերապատրաստել դատավորներին ընտանեկան բռնություն պարունակող հանցատեսակների առանձնահատկությունների, գենդերային հիմքով բռնությունների և խտրականության վերաբերյալ:

7. Դատաքննության ժամանակ թույլ տալ տուժողին և վկաներին ներկայացնել բռնության ամբողջական շղթան, բացահայտել բռնությունների պարբերականությունն ու հաճախականությունը: Այս հանգամանքները կարող են նշանակություն ունենալ պատիժը ընտրելիս: Շատ բռնարարներ նախկինում դատված չեն եղել, ոչ թե չեն գործել նմանօրինակ արարքներ, այլ պարզապես նրանց նկատմամբ մեղադրանք չի առաջադրվել հիմնականում կնոջ բողոքի բացակայության պատճառով:

ՀՀ Ազգային ժողովին

1. Կատարել փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում՝ բացառելով ընտանեկան բռնության գործերով տուգանքը որպես պատիժ նշանակելը:

2. Կատարել փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում՝ ներառելով ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցակազմ:

3. Կատարել փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում՝ ներառելով հետապնդումը որպես առանձին հանցակազմ:

4. Կատարել փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքի 163-րդ («ինքնասպանության հակելը») և 164-րդ («ինքնասպանության նպաստելը») հոդվածներում. հանցագործությունը ավելի որակյալ դարձնող հիմքերում ավելացնել արարքը մերձավոր ազգականի կողից կատարելը:

5. Կատարել փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում՝ ընտանեկան բռնությանը վերաբերող հանցագործությունների դեպքում որպես խստացնող հանգամանք ներառելով բռնությունների պարբերականությունն ու շարունակականությունը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին

1. Հետևողական լինել իրավապահ մարմինների և դատական համակարգի վերաբերյալ բռնության ենթարկված կանանց կողմից ստացվող ահազանգերին: Վերահսկել լիազորությունները գերազանցած պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու գործընթացը՝ հանրությանը պարբերաբար իրազեկելով դրա վերաբերյալ:

2. Աջակցել ՀՀ բարձրագույն դատական խորհրդին ընտանեկան բռնության գործերի քննության ընթացակարգային կանոններ սահմանելու հարցում:

3. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ դիմած բռնության ենթարկված կանանց ուղղորդել ընտանեկան բռնության աջակցման կենտրոններ:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցման կենտրոններին, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին:

1. Շարունակել խրախուսել և աջակցել բռնության ենթարկված

կանանց՝ բարձրաձայնելու իրավապահ և դատական համակարգում առկա արդարադատության մատչելիության խոչընդոտների վերաբերյալ:

2. Մշտադիտարկել նոր օրենսգրքերի հիման վրա ընտանեկան բռնության դեպքերով քրեական վարույթները՝ պարզելու համար նոր իրավակարգավորումների ազդեցությունը իրավակիրառ պրակտիկայի վրա:

3. Կատարել հին և նոր քրեական և քրեադատավարական օրենսգրքերի կարգավորումների իրավահամեմատական վերլուծություն՝ գնահատելու համար նոր կարգավորումների ազդեցությունը ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով իրավակիրառ պրակտիկայի վրա:

4. Հետևողականորեն լուսաբանել ընտանեկան բռնության գործերով դատաքննությունները՝ ուշադրություն դարձնելով բռնության ենթարկված կանանց համար արդարադատության մատչելիությանը:

Հավելված 1

Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատական նիստերի մշտադիտարկման մեթոդաբանական հարցաշար

- Ի՞նչ ժամկետում է քննվել գործը, քանի՞ անգամ է նիստը հետաձգվել, ի՞նչ պատճառաբանությամբ:

- Արդյո՞ք տուժողի անվտանգությունն ապահովված է դատական նիստի ժամանակ, նիստից առաջ և հետո: Ինչպիսի՞ մթնոլորտ է տիրում դատական նիստի դահլիճում, դատարանի շենքի ներսում և դրա շրջակայքում:

- Արդյո՞ք դատարանը կայացրել է պաշտպանական որոշումներ, մասնավորապես, ի՞նչ ժամկետում է որոշում կայացվել, քանի՞ օրով, քանի՞ դեպքում է երկարացվել:

- Արդյո՞ք տուժողը կամ տուժողի իրավահաջորդը ունեցել է փաստաբան, ո՞ր փուլում և ի՞նչ հիմունքներով:

- Արդյո՞ք դատարանում տուժողին, վկային, մեղադրյալին տրված հարցերն իրենց բովանդակությամբ և ձևակերպմամբ բազմակի/միջսեկտորային խտրականություն են՝ մասնավորապես, հիմք ընդունելով կանանց էթնիկ ծագումը, սոցիալ-տնտեսական վիճակը (միայնակ մայր), գյուղաբնակ լինելը, հաշմանդամությունը և այլն:

- Արդյո՞ք մեղադրական եզրակացությունում և դատական նիստի ընթացքում դատավորը և դատավարության մասնակիցները գործածում են այնպիսի ձևակերպումներ, արտահայտություններ, գենդերային կողմնակալություն (gender bias), որոնք ամրապնդում են գենդերային դերերի վերաբերյալ առկա միֆերն ու կարծրատիպերը:

- Ի՞նչ որոշումներ են կայացվել գործերով, ինչպիսի՞ պատիժ է ընտրվել՝ ազատազրկման հետ կապվա՞ծ, թե՞ չկապված:

- Մեղմացնող և/կամ ծանրացնող ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվել պատժաչափը որոշելիս:

- Որքանո՞վ են պատիժները համաչափ և ծառայո՞ւմ են տուժողին պաշտպանելու, բռնարարի կողմից բռնության կրկնությունը կանխելու և երկրում ընտանեկան բռնությունը նվազեցնելու նպատակին:

- Արդյո՞ք մեղադրական եզրակացությունում հանցանքը ներկայացված է նաև որպես խտրականության դրսևորում:

- Արդյո՞ք առկա են դատական գործեր, որտեղ անմիջականորեն կիրառել են միջազգային իրավունքի համապատասխան նորմերը կամ չափանիշները՝ հիմնվելով Սահմանադրության 81-րդ հոդվածի վրա, մեկնաբանել են կիրառվող նորմը՝ հիմք ընդունելով պայմանագրային մարմինների պրակտիկան (օրինակ՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը):

- Արդյո՞ք ընտանեկան բռնության նախկին դրվագների առկայությունը, պարբերական բնույթն ազդեցություն ունեցել են հանցագործության որակման վրա, թե՞ որակումը եղել է միայն բռնության մեկ դրվագի վերաբերյալ:

- Արդյո՞ք հարուցված քրեական գործերի հիման վրա տուժողը բռնության հետևանքով կրած ծախսերի (օրինակ՝ առողջապահական ծառայություններից օգտվելու մասով) փոխհատուցում է ստացել:

Հավելված 2

Ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատական ակտերի ուսումնասիրության մեթոդաբանական հարցաշար

- Ի՞նչ որոշում է կայացվել դատական գործով:
- Ինչպիսի՞ պատիժ է ընտրվել՝ ազատազրկման հետ կապվա՞ծ, թե՞ չկապված:
- Մեղմացնող և/կամ ծանրացնող ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվել պատժաչափը որոշելիս:
- Տվյալ հոդվածով սահմանված պատժաչափերից ո՞րն է ընտրվել՝ նվազագո՞ւյնը, թե՞ ամենախիստը:
- Դիտարկվող գործերից քանի՞սն են եղել հանրային մեղադրանքի, քանի՞սը՝ մասնավոր մեղադրանքի գործեր:
- Ի՞նչ ժամկետում է քննվել դատական գործը:
- Արդյո՞ք մեղադրական եզրակացությունում կատարված հանցանքը ներկայացված է նաև որպես խտրականության դրսևորում:
- Արդյո՞ք առկա են դատական գործեր, որտեղ անմիջականորեն կիրառվել են միջազգային իրավունքի համապատասխան նորմերը կամ չափանիշները՝ հիմնվելով Սահմանադրության 81-րդ հոդվածի վրա, մեկնաբանել են կիրառվող նորմը՝ հիմք ընդունելով պայմանագրային մարմինների պրակտիկան (օրինակ՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը):

- Արդյո՞ք ընտանեկան բռնության նախկին դրվագների առկայությունը, պարբերական բնույթը ազդեցություն ունեցել են հանցագործության որակման վրա, թե՞ որակումը եղել է միայն բռնության մեկ դրվագի վերաբերյալ:

- Արդյո՞ք հարուցված քրեական գործերի հիման վրա տուժողը բռնության հետևանքով կրած ծախսերի (օրինակ՝ առողջապահական ծառայություններից օգտվելու մասով) փոխհատուցում է ստացել:

- Արդյո՞ք տուժողը կամ տուժողի իրավահաջորդը ունեցել է փաստաբան, ո՞ր փուլում և ի՞նչ հիմունքներով (եթե հնարավոր է, դատական ակտից պարզել):

- Արդյո՞ք դատարանը կայացրել է պաշտպանական որոշումներ:

- Ի՞նչ ժամկետում է պաշտպանական որոշում կայացվել և քանի՞ օրով:

- Արդյո՞ք երկարացվել է պաշտպանական որոշումը: Եթե այո, ապա ո՞վ է դիմել և ի՞նչ ժամկետներում:

Հավելված 3

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքում ընտանեկան բռնության վերաբերյալ գործերին առնչվող հոդվածների փոփոխությունները

Նախորդ քրեական օրենսգիրք	Նոր քրեական օրենսգիրք
Հոդված 75. **Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով** 1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները. 1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից. 2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից. 3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից. 4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:	Հոդված 83. **Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով** 1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները. 1) հինգ տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում. 2) տասը տարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում. 3) տասնհինգ տարի՝ ծանր հանցանքի դեպքում. 4) քսան տարի՝ առանձնապես ծանր հանցանքի դեպքում:
Հոդված 104. **Սպանությունը** 1. Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը, պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:	Հոդված 155. **Սպանությունը** 1. Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը, պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով: 2. Սպանությունը՝ ... ... 9) մերձավոր ազգականի կողմից,պատժվում է ազատազրկմամբ՝ տասնչորսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ:

Հոդված 110. **Ինքնասպանության հասցնելը** 1. Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:	Հոդված 162. **Ինքնասպանության հասցնելը** 1. Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակով անձին անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 3) մերձավոր ազգականի կողմից[31], պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:
Հոդված 111. **Ինքնասպանության հակելը** Ինքնասպանության հակելը՝ հորդորելու, խաբեության կամ այլ միջոցով անձի մեջ ինքնասպանություն կատարելու վճռականություն հարուցելը, եթե անձն ինքնասպանությամբ կյանքին վերջ է տվել կամ ինքնասպանության փորձ է կատարել, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:	Հոդված 163. **Ինքնասպանության հակելը** 1. Հորդորելու, համոզելու կամ խաբեության միջոցով անձի մեջ ինքնասպանություն գործելու վճռականություն հարուցելը, եթե անձն ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ է կատարել, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

31 ՀՀ քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացություններում տրվում է «մերձավոր ազգականի» նշանակությունը: Այն է՝ մերձավոր ազգական՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

Հոդված 112. **Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը** 1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:	Հոդված 166. **Առողջությանը ծանր վնաս պատճառելը** 1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որը՝ 1) վտանգավոր է կյանքի համար, 2) առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ դրա գործառույթի կորուստ, 3) արտահայտվել է դեմքի, գլխի, ականջի կամ կզակի անջնջելի այլանդակմամբ, 4) առաջացրել է առողջության քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ 5) առաջացրել է հոգեկան խանգարում, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով: 2. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է հղիության ընդհատում, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: 3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 9) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 113. **Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը** 1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է առողջության տևական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ, պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:	Հոդված 167. **Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը** Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է՝ 1) առողջության տևական քայքայում կամ 2) ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ, պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 9) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 117. **Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը** Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինսնապատիկից[32] հարյուրհինսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:	Հոդված 171. **Առողջությանը թեթև վնաս պատճառելը** 1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է՝ 1) առողջության կարճատև քայքայում կամ 2) ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 6) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

32 Նախքան 2022 թվականի հուլիսի 1-ը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներում որպես հաշվարկային հիմք «նվազագույն աշխատավարձը» սահմանվել է 1000 ՀՀ դրամ: Հուլիսի 1-ից ՀՀ քրեական

Հոդված 118. **Ծեծը** Ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:	Հոդված 195. **Ֆիզիկական ներգործությունը** 1. Հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը, եթե չեն առաջացել սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 6) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

օրենսգրքի հոդվածներում նշված «նվազագույն աշխատավարձ» հասկացությունը համապատասխանում է տվյալ պահին Հայաստանի Հանրապետությունում գործող նվազագույն աշխատավարձի չափին: Զեկույցի հրապարակման պահին դա 68000 ՀՀ դրամն է: Այսպիսով՝ ստացվում է, որ նոր քրեական օրենսգրքով բարձրացվել են տուգանքի չափերը: Օրինակ՝ առողջությանը թեթև վնաս հասցնելու համար նախկինում սահմանված էր տուգանք 50-150 հազար ՀՀ դրամի չափով, ներկայումս գործող օրենսգրքով նվազագույն շեմ սահմանված չէ, առավելագույն շեմը 680 հազար ՀՀ դրամ է: Իսկ նույն արարքը մերձավոր ազգականի կողմից կատարված լինելու դեպքում (ընտանեկան բռնություն) տուգանքի առավելագույն շեմը 1 միլիոն 360 հազար ՀՀ դրամ է:

Հոդված 119. **Խոշտանգումը** 1. Խոշտանգումը՝ ցանկացած այնպիսի գործողությունը, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 3) ...հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ: 4) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, ... 6) առանձին դաժանությամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:	Հոդված 196. **Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը** 1. Անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ … 2) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, … 4) առանձին դաժանությամբ, … 6) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:
Հոդված 131. **Մարդուն առևանգելը** 1. Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:	Հոդված 191. **Մարդուն առևանգելը** 1. Մարդուն առևանգելը՝ անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 133. **Ազատությունից ապօրինի զրկելը** 1. Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, որն առևանգելու հետ կապված չէ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:	Հոդված 192. **Ազատությունից ապօրինի զրկելը** 1. Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ կամ 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ … … 6) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 137. **Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը** 1. Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:	Հոդված 194. **Հոգեկան ներգործությունը** 1. Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ … 4) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 139. **Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները** 1. Համասեռամոլությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները՝ տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:	Հոդված 195. **Ֆիզիկական ներգործությունը** 1. Հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը, եթե չեն առաջացել սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 6) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 119. **Խոշտանգումը** 1. Խոշտանգումը՝ ցանկացած այնպիսի գործողությունը, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ ... ... 3) ...հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ: 4) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, ... 6) առանձին դաժանությամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:	Հոդված 196. **Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը** 1. Անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ … 2) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, … 4) առանձին դաժանությամբ, … 6) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:
Հոդված 131. **Մարդուն առևանգելը** 1. Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:	Հոդված 191. **Մարդուն առևանգելը** 1. Մարդուն առևանգելը՝ անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 133. **Ազատությունից ապօրինի զրկելը** 1. Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, որն առևանգելու հետ կապված չէ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:	Հոդված 192. **Ազատությունից ապօրինի զրկելը** 1. Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ կամ 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ … … 6) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 137. **Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը** 1. Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:	Հոդված 194. **Հոգեկան ներգործությունը** 1. Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը, պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ … 4) մերձավոր ազգականի կողմից, պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 139. **Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները** 1. Համասեռամոլությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները՝ տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:	Հոդված 198. **Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները** 1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ … 3) մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 140. **Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը** Անձին սեռական հարաբերության, համասեռամոլության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը՝ շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:	Հոդված 199. **Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը** 1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի կամ նույն եղանակներով նրան սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ կամ 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ 1) հղի կնոջ նկատմամբ, 2) անչափահասի նկատմամբ, 3) մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով իսկ եթե կատարվել է 12-ից 16 տարին չլրացած անձի նկատմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 141. **Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ** Տասնութ տարին լրացած անձի կողմից սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ՝ սույն օրենսգրքի 138-րդ, 139-րդ կամ 140-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:	Հոդված 200. **Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ** 1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձի նկատմամբ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ, 198-րդ կամ 199-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
Հոդված 147. **Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը** 1. Մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:	Հոդված 207. **Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը** 1. Մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով նրա բնակարան ապօրինի մուտք գործելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Հոդված 353. **Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը** 1. Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (այսուհետ՝ դատական ակտ) դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:	Հոդված 507. **Դատական ակտը չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը** 1. Օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարմանը խոչընդոտելը, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դրանով սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում այն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կամ տվյալ ակտի կատարման շրջանակներում հարկադիր կատարողի սահմանած ժամկետում պարտապանի կամ նրա իրավասու անձի կողմից չկատարելը, եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ, կամ տվյալ ակտով արգելված գործողություն կատարելն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում պատժվում են տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: